




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4889

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒԴԱՊԱՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

Հ. Ս. Խ. Հ. ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

№ 3.

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԱԶԽԱՏԱՎՈՐԻ

634.9

ՈԼ-81

ՅԵՐԵՎԱՆ

ՏՐԵՍԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

1924

26 AUG 2013

634.9

24 SEP 2010

AL-21

Պատկերներ բոլոր յեկրներ, միացնի

Հ. Ս. Խ. Հ. ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

630


№ 3.

99-ՈԽ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

1003
10441

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԱԶԽԱՏԱՎՈՐԻ



ՅԵՐԵՎԱՆ

ՏՐԵՍԻ Ե.Ռ.Ս.ՋԻՆՆ. ՏՊԱՐԱՆ

1924

4889

4889

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՈՐԵՆՍԳԻՐՔ *)

1923 թ. դեկտեմբերի 29

ՀԱՏՎԱԾ 1.

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Բոլոր անտառները և անտառաբուծության ու անտառային տնտեսության կարիքների համար հատկացված և սույն նպատակով ուրիշ նշանակություն ունեցող հողերից սահմանված կարգով զատված հողերը կազմում են Բանվորա-Գյուղացիական Պետության սեպհականությունը և միասնական պետական անտառային ֆոնդ:

2. Պետական անտառային ֆոնդից հողային ֆոնդը փոխանցվելու համար կարող են հանվել հետևյալ պաշտպանողական նշանակություն ունեցող հողամասերը.

ա) Հողոգտագործման ընդարձակման նպատակով մինչ հեղափոխական շրջանում գյուղացիական հասարակություններին որինական կարգով հատկացրած անտառամասերը.

բ) Աշխատավոր գյուղացիության հո-

*) Արտատպված է Հ.Ս.Ն.Հ. Դեկրետների և Վրոդոնների Հավաքածուի 1924 թ. № 1-ից:

ղերի մեջ սեպածեմ մտնող և գլուղատըն-
տեսության համար անհարմարություններ
ներկայացնող աննշան անտառամասերը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Պետական ան-
տառային ֆոնդից հողամասեր դուրս ե հա-
նում Հողագործության ժողովրդական Կո-
միսարիատը:

3. Անտառային ֆոնդից հանված և հողային
ֆոնդը փոխանցվելիք հողամասերը (հողված 2)
իրենց վրա բուսնող ծառատունկերով անցնում
են հողաշինարարական հաստատությունների
տնօրենության և սրանց կողմից ստացված հողագ-
տագործողներին Հողային Որենսգրքով նախա-
տեսված պայմաններով ու հիմունքներով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Անտառային ֆոն-
դից հանած հողամասերի վրա բուսնող
ապրանքի բնույթ ունեցող ծառերը ռեսուր-
սացիայի յեն յեն թարկվում ընդհանուր
հիմունքներով Հողօգտագործման անտառային
մարմինների կողմից:

ՀԱՏՎԱԾ II

ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ
ԱՆՏԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գ Լ Ո Ւ Խ 1.

Ր Ն Գ Հ Ա Ն Ո Ւ Ր Հ Ի Մ Ո Ւ Ն Գ Ն Ե Ր

4. Պետական նշանակություն ունեցող ան-

տառներում անտեսություն վարում են Հողօգ-
տագործման անտառային մարմինները:

Գ Լ Ո Ւ Խ 2.

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ-
ԹՅՈՒՆԸ

5. Պետական նշանակություն ունեցող ան-
տառամասերում, անտառային կանոնավոր տըն-
տեսություն վարելու համար, Հողօգտագործման
հատուկ հրահանգներով կազմակերպվում է տըն-
տեսավարության ծրագիր, վոր սահմանում է
անտառահատության կամ անտեսության շրջա-
նառությունը, բոլոր անտառային ոգտագործու-
թյունների չափն ու կարգը, այլ և անտառաբու-
ծության, անտառի վերանորոգության ու խնա-
մելու աշխատանքների հիմունքը:

6. Յուրաքանչյուր տարի պետական նշա-
նակություն ունեցող անտառամասերից բաց
թողնվելիք անտառանյութերի չափը, տարեկան
աճումից վոչ ավելի, վորոշվում է անտառա-
պետների կազմած նախահաշիվներով հետազոտ-
ված և կարգի բերված անտառամասերից, ըստ
հաստատված տնտեսական ծրագրի, իսկ մյուս
անտառամասերից՝ Հողօգտագործման հրահանգներով
կազմած հատուկ կանոններով ու հաշիվներով:

7. Բոլոր անտառապետություններից բաց

թողնվելիք անտառանյութերի նախահաշիվները քննում ե Անտառային Վարչությունը և նրանց ամփոփումը ներկայացնում ե Հողագործություն ժողովրդական կոմիտարիատին ի հաստատություն:

8. Բացառիկ դեպքերում թույլ ե արվում բաց թողնել կենդանի (դալար) ծառեր և նախահաշվից դուրս, բայց յուրաքանչյուր անգամ Հողօգտագործատի հատուկ վորոշմամբ և Ժողովրդական կոմիտարների խորհրդի հաստատությամբ: Նախահաշվից դուրս բաց թողնված փայտեղենի քանակը պետք ե լրացվի հետագա տարիների ընթացքում բաց թողնվելիք ծառերի քանակը նվազեցնելով:

9. Մեռած կամ աճելությունը սպառված լինելու չափ վնասված, հողմնահար, վորպես ու մաքրման ու նորացման ժամանակ հատվելիք ծառերը, նայելով ճանապարհներ բանալու դեպքում կտրվածները և այլն, բաց են թողնվում նախահաշվից դուրս՝ նախահաշվին հաշվակցելով կամ առանց հաշվակցելու, անտառանյութ բաց թողնելու համար սահմանված հրահանգների հիման վրա:

10. Չկտրված ծառերի արժեքը սահմանվում ե ըստ սակագնի, վոր համաձայն Հողագործություն ժողովրդական հրահանգի կազմում ե Ան-

տառային Վարչությունը և հաստատում Ժողովրդական կոմիտարների խորհուրդը:

11. Բաց թողնվելիք անտառանյութի արժեքը, ըստ սակագնի, Անտառային Վարչության առաջարկությամբ Հողօգտագործատը կարող ե ավելացնել մինչեւ 30 տոկոս, աչքի առաջ ունենալով շուկայի գները կամ ավելի անտառարժանի ծառերի բացառիկ արժեքը:

12. Համապետական նշանակություն ունեցող անտառամասերից բաց թողնվելիք փայտեղենը վաճառում են Հողօգտագործատի անտառային մարմինները դեռ չկտրած՝ ըստ սակագնի և առանց աճուրդի:

ա) Պետական մատակարարման մեջ գտնվող պետական հաստատություններին ու ձեռնարկություններին, նայելով տեղական բյուջեյով պահվող տեղական հաստատություններին, սրանց համար ձեռագրված նախահաշվի սահմաններում:

բ) Աշխատավոր հոգոգտագործողներին, գաղթականներին, նայելով պետական հաստատություններին ու ձեռնարկություններին՝ նորմայի սահմաններում: Նորմաները սահմանում ե Անտառային Վարչությունը և հաստատում Հողօգտագործատը, ի նկատի ունենալով տեղի

անտառային հարստության և կլիմայական պայմանները.

գ.) Պետական ձեռնարկություններին ու միություններին, վորոնց հիմնական նպատակը փայտեղենի մեքենական և քիմիական մշակությունն է, իրենց արտադրական ծրագրի սահմաններում, այլ և պետական հաստատություններին ու ձեռնարկություններին, իրենց սեպնական կարիքների սահմաններում, առանց աճուրդի, ըստ սակագների, ավելացնելով մի քանի տոկոս՝ Հողօգտագործության վորոշման համաձայն.

13. Աշխատավոր չքավոր բնակչությանը (կարմիր զինվորների ընտանիքներին, գաղթականներին և ուրիշներին) կարելի չէ բաց թողնել մեռած ծառատունկերից վառելափայտ և շինանյութ սակագներից 50 տոկոս պակաս գնով համաձայն գավառակային գործկոմների տված վկայականների, վոր գավառական գործկոմները ներկայացնում են Հողագործության ժողովրդական կոմիսարիատին.

14. Ժողովրդական կոմիսարների խորհրդի թույլտվությամբ Հողագործության ժողովրդական կոմիսարիատը ձրիբար փայտեղեն կարող է բաց թողնել տարբային աղետներից (հրդեհ, հեղեղ և այլն) տուժածներին, հասարակական

կարիքների համար (ուսումնարան, հիվանդանոց և այլն), այլ և գաղթականներին տներ շինելու համար: Անտառային տնտեսության կարիքների համար (անտառապետությունների տնտեսական շենքերի վերանորոգության ու կառուցման, ճանապարհների համար) փայտեղեն կարելի չէ բաց թողնել Հողագործության ժողովրդական կոմիսարիատի թույլտվությամբ:

15. Սույն Որենսդրելի 23—25 հոդվածների

հիման վրա փայտեղեն ստացողները սլարտավորվում են գործադրել այն իրենց անմիջական կարիքների համար, առանց անտառահատության իրավունքը ուրիշին զիջելու:

Արգելվում է սպառողներին անտառանյութը և վառելափայտը ուրիշին վաճառել, այլ և կտրած կամ չկտրած ծառերը գործադրել իրենց վարձատրություն ծառայողներին, բանվորներին, կապալառուներին: Արգելվում է նայել գործ կատարելը անտառանյութեղենի մասնատրության պայմամով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Սույն արգելանքը չի տարածվում անտառահատության, փայտի մշակության կամ վառելափայտի պատրաստության, փայտի մշակության կամ վառելափայտի պատրաստության համար անպետք մնացորդների վրա (տաշեղեններ, ճյուղեր և այլն):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Փայտեղենի մեքենական և քիմիական մշակությամբ պատրաստվող պետական հաստատություններին ու ձեռնարկություններին, իրենց արտադրական ծրագրի սահմաններում, թույլատրվում է նայել վաճառել անտառանյութ և վառելափայտ:

16. Կոնցեսիայի հիմունքներով յերկար ժամանակ կապալով տրվող անտառային մասերին և ներքից փայտ բաց թողնելու կարգը նախատեսվում է անտառային Որենսգրքի 41—45 հոդվածների հիման վրա կազմած պայմանագրերով:

17. Պետության և տեղական բնակչության կարիքները բավարարելուց հետո, ըստ նախահաշվի ավելացած փայտեղենը աճուրդով վաճառվում է բոլոր մնացած սպառողներին:

18. Փայտեղենի թե աճուրդով և թե առանց աճուրդի վաճառքը տեղի յե ունենում Հոդվող կոմատի և Ֆինսոցկոմատի սահմանած հատուկ պայմանների ու կանոնների հիման վրա:

19. Փայտեղենի վաճառման պայմաններին մեջ (հոդվ. 29) պետք է վերոշված լինեն. ա) գրավականի չափը հատման տեղերի մաքրելը ապահովելու, իսկ մասնավոր անձանց նկատմամբ՝ նայել պայմանագրի ճիշտ կատարումը ապահովելու համար. բ) փայտեղեն պատրաստելու, արտահանելու և հատման տեղը մաքրելու

պայմանաժամերը. գ) փայտեղենի արժեքի վճարաժամերը. դ) պատրաստված նյութերի և հատման տեղի ստուգման կարգը. ե) պատրաստված նյութերի հաշվառության և չափելու կարգը. զ) պայմանների խախտման պատասխանատվությունը, ը) պայմանների լուծման պատճառները և տուգանքի հատուցումը. թ) բաց թողնվող փայտեղենի հաշվառության յեղանակը:

20. Թե առանց աճուրդի և թե աճուրդով փայտ կոտորելն ու պատրաստելը թույլատրվում է միմիայն անտառահատման տոմսերով:

21. Փայտը գնորդների լիակատար արամադրության տակ դնելը թույլ է տրվում կամ պայմանագրերով, կամ թե նրա ամբողջ արժեքը վճարելու կամ պատշաճ յերաշխավորությունը ապահովելու պայմանով:

Գ Լ Ո Ւ Ն 3

ԱՆՏԱՐՆԵՐԻ ԿՈՂՄՆԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

22. Անտառների կողմնակի արդյունքներն են՝ անասուններ արածացնելը, խոտ հնձելը, վորսորդությունը, կաղին և թափված տերեւներ ժողովելը, անտառների լճերում ու գետերում ձուկ վորսալը, նայել անտառապետության սահմաններում գտնվող տորփի, կավ, ավսղ և քար հանելը:

23. Համապետական նշանակութիւն ունեցող անտառներում անասուն արածացնելը թույլատրվում է Հողժողկոմատի հրահանգների համաձայն՝ անտառների բնական աճման և մատաղ տունկերի պահպանութեան պայմանով:

24. Կողմնակի արդյունքներից վճարով կամ ձրիապես ոգտվելու կարգը սահմանում է Հողժողկոմատը:

25. Անտառային մարմիններին իրավունք է տրվում անտառների սահմաններում գտնվող հողամասերը ոգտագործել անտառային տնտեսութեան (տնկարաններ, պաշտոնեական հողաբաժիններ) և անտառային արդյունաբերութեան (փայտի պահեստներ և այլն) կարիքների համար:

Այդ հողամասերի շահագործումը կատարվում է մասնավոր հիմունքներով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Անտառայնութեի պահեստները և այլն առաջին հերթին տրամադրվում են պետական անտառարդյունաբերական ձեռնարկութիւններին:

ՀԱՏՎԱԾ III

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

26. Հատուկ նպատակ ունեցող անտառներն են համապետական նշանակութիւն ունեցող

անտառներից պետութեան հատուկ կարիքների համար զատվածները:

27. Մասնավորապես դրանց կարգին են պատկանում.

ա) Պաշտպանողական անտառները.

բ) Կրթա-փորձական անտառամասերը և բնութեան հիշատակարանները.

գ) Լեռնա-արդյունաբերական անտառները.

դ) Քաղաքային անտառները.

ե) Կոնցեսիայի պայմանագրերի հիման վրա շահագործվող անտառամասերը.

զ) Միացյալ տնտեսութիւններ ստեղծելու կարգով պետական փոխադրական կամ արդյունաբերական ձեռնարկութիւնների և նրանց միութիւններին տրված անտառամասերը:

28. Նախընթաց հոգվածում մատնանշված նպատակներով հատուկ նշանակութիւն ունեցող անտառամասերից հատկացվում են համապատասխան հաստատութիւնների ու ձեռնարկութիւնների, Հողժողկոմատի մշակած և Ժողկոմների Խորհրդի հաստատած հատուկ կանոնադրութեան հիման վրա:

29. Հատուկ նպատակ ունեցող անտառամասերը նորից փոխանցվում են համապետական

անտառային ֆոնդը հետեւյալ դեպքերում.

ա) Յերբ լրանում է նրանց ոգտագործման համար սահմանված ժամանակը.

բ) Յերբ անցնում է այդ անտառների կարիքը այն հիմնարկությունների համար, վերոնց այդ անտառները արված են:

30. Պաշտպանողական են համարվում այն անտառները և մացառուաները, վոր

ա) Առաջն են առնում հոսանքուտ ավազների կամ նրանց տարածման.

բ) Առաջն են առնում ջրի մակերեւծութի ցածանալու՝ գետերի և գետակների ակունքներում և բերաններում.

գ) Պաշտպանում են գետերի և ջրամբարների ափերը փլչելուց ու վողոգվելուց.

դ) Առաջն են առնում հողի փուլքերի, բարափների քայքայման, հողի վողոգումների, ձյունահյուսքերի և հեղեղառների.

ե) Ձյունահավաք և ձյունապաշտպան պատվարների դեր են կատարում.

զ) Առողջապահական կամ հսթետիքական նշանակություն ունեն.

ը) Վորյեվե գիտական նկատառումով պետք է պահպանվեն իրենց բնական դրության մեջ (բնության հիշատակարաններ):

31. Անտառամասերը պաշտպանողական ճա-

նաչիլը և նրանց ոգտագործման պայմանները վորոշվում են Հողօգտագործման մշակած և Ժողկոմխորհի հաստատած հատուկ կանոններով:

32. Համապետական բուժական հաստատությունների (կուրորտների) կարիքների համար կարող են հատկացվել փոքր անտառամասեր, վորոնք պուրակի նշանակություն ունեն և վորոնք դրվում են Առողջապահության Ժողովրդական Կոմիտեարիատի տրամադրության տակ:

33. Հողօգտագործման սահմանած հատուկ պայմաններով 30 հոդ. և, զ, և ը կետերում թված պաշտպանողական անտառները կարող են տրվել այլ մարմինների կամ հաստատությունների:

34. Անտառային, անտառատեխնիքական և բարձրագույն դյուղատնտեսական դպրոցների կրթական կամ կրթափորձական նպատակների համար կարող են հատկացվել անհրաժեշտ անտառամասեր:

35. Կրթափորձական անտառամասերի շահագործումից ստացված արդյունքը, վորպես հատուկ միջոցներ՝ անցնում են համապատասխան դպրոցի կամ հաստատության տրամադրության տակ և նախահաշվով ու սահմանված կարգով ծախսվում կրթափորձական գործի զարգացման ու այդ անտառամասերի տնտեսության կարիքների համար:

36. Լեռնարդյունաբերական և պետական փոխադրական ու արդյունաբերական ձեռնարկությունների կարիքները բավարարելու համար կարող են հատկացվել հատատեղեր, վորոնց փայտեղենի պաշարը բավական է հիշյալ ձեռնարկությունների փայտեղենի արտադրական կարիքների համար:

37. Քաղաքներին, քաղաքատիպ բնակավայրերին կից և նախկին քաղաքապետական հողերում գտնվող անտառամասերը համարվում են քաղաքային անտառներ և մտնում են քաղաքի սահմանների մեջ քաղաքապետական հողերի հետ ընդհանուր հիմունքներով, համաձայն Հողային Որենսգրքի:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Ամրանոցներին, վորոնք գտնվում են քաղաքային խորհուրդների տրամադրության տակ, անտառամասերի ոգտագործման տեսակետից նույն իրավունքն է տրվում, ինչ վոր քաղաքներին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Քաղաքային անտառների սահմաններից են այն անտառամասերը և պուրակները, վորոնք հատկացվում հանվում են անտառային, անտառատեխնիքական և բարձրագույն գյուղատնտեսական դպրոցներին-կրթական նպատակներով, յեթե նույնիսկ նրանք գտնվում են քաղաքի սահմաններում:

38. Այս կամ այն անտառամասը կարող է ժողկոմխորհի հավանությամբ հատկացվել գավազործկոմներին, վերջինների համաձայնությամբ Հողժողկոմատի հետ:

39. Քաղաքային անտառները գտնվում են քաղաքային խորհուրդների տնորենության տակ և նրանց վորոշմամբ կարող են հայտարարվել ամբողջովին կամ մասամբ անձեռնմխելի:

40. Քաղաքային անտառներում սահմանվում է պուրակային տնտեսություն ներքգործող-կոմատի և Հողժողկոմատի համաձայնությամբ սահմանված հատուկ կանոններով և հրահանգներով:

41. Կոնցեսյոն անտառներ համարվում են այն անտառամասերը, վորոնք ոգտագործման և շահագործման նպատակով Հողժողկոմատի մշակած և ժողկոմխորհի հաստատած հատուկ պայմանագրով հատկացվում է կոնցեսյոներներին:

42. Անտառային կոնցեսյանների շրջանները հաստատում է ժողկոմխորհը, համաձայն Հողժողկոմատի ներկայացրած ծրագրի:

43. Կոնցեսյոն ոգտագործման համար հատկացված անտառատնտեսական միավորը մնում է Հողժողկոմատի ընդհանուր տնորենության տակ, իսկ կոնցեսյոներին իրավունք է տրվում յուրաքանչյուր տարի պայմանագրով

վորոշված ժամանակամիջոցում ոգտագործել տնտեսության ծրագրի համաձայն հատատեղերի փայտեղենը:

44. Կոնցեսյոն պայմանագրերում նախատեսված պետք է լինեն.

ա) Կոնցեսյոն անտառամասերի սահմանները.

բ) Կոնցեսյայի ժամանակամիջոցը.

գ) Տնտեսության ընդհանուր և մասնակի ծրագրի կազմելու կարգը.

դ) Յուրաքանչյուր տարվա անտառահատման համար հատատեղեր հատկացնելու կարգը.

ե) Կոնցեսյոններից հաստնելիք վճարի չափը, վճարման կարգը և պայմանները.

զ) Կոնցեսյոնների կողմից պայմանագրի խախտումից բխող հետեվանքները և

է) Կոնցեսյայի ոգտագործումը կարգավորող այլ պայմանները:

45. Հողժողկոմատի համապատասխան մարհմինների վրա պարտականություն է դրվում սկսելու, վոր կոնցեսյոնները ճշտությամբ կատարեն անտառատնտեսության ծրագրերը:

46. Հողժողկոմատին իրավունք է վերապահվում հատկացնել փայտեղենի մեքենական և բիմիական մշակությամբ զբաղվող պետական

միություններին և ձեռնարկություններին հատատեղեր, հատուկ պայմանագրերով, մինչեւ տարտարվա նախահաշվի չափով, տնտեսության ծրագրով նախատեսված հերթով մշակելու պայմանով՝ այն անտառներում, վորոնց փայտեղենը ամբողջովին չի վաճառվում:

ՀԱՏՎԱԾ IV

ԱՆՏԱՌԱՄԱՍԵՐՆ ԱՅԼ ՆՊԱՏԱԿԻ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼԸ

47. Պետական անտառներում պաշտպանողական չճանաչված անտառների վորջնացումը կամ այլ նպատակների համար հատկացնելը թույլատրվում է հետեվյալ դեպքերում.

ա) Պետական կարիքների համար՝ յերկաթուղիների, պոլիգոնների, հրացանաձգության վայրերի, բանակատեղերի, շենքերի և պետական նշանակություն ունեցող այլ պետքերի համար.

բ) Յերբ գյուղատնտեսության բարելավումը անպայման պահանջում է տնտեսական հողամասերի ընդլայնումը ի հաշիվ անտառների.

գ) Գաղթավայրեր ստեղծելու նպատակով, յերբ այդ նախատեսված է որենսդրական հատուկ ակտերով:

48. Նախորդ հոդվածում մատնանշված դեպքերում անտառամասերի վոչնչացումը և այլ նպատակների համար հատկացնելը թույլատրվում է հոդվածում ևս վորոշմամբ:

49. Վոչնչացնելու համար անտառամասերը տրվում են հողաշինարարության սահմանված կարգով և համապատասխան արձանագրությանը, վորով վորոշվում է անտառը կտրելու պայմանաժամը, նկատի ունենալով անտառի տարածությունը և վաճառման պայմանները:

50. Հողոգտագործման այլ տեսակի վերածելու հետեւանքով անտառամասերից ստացված փայտեղենը բաց է թողնվում ընհանուր հիմունքներով:

ՀԱՏՎԱԾ V

ՊԵՏԱԿԱՆ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՖՈՆԴԸ ԿԱՌԱՎԱՐՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

51. Հ. Ս. Խ. Հ. անտառների միասնական պետական ֆոնդի տնօրենությունը իրագործվում է հողօգտագործման անտառային մարմինների մեջոցով:

52. Պետական անտառային ֆոնդը պաշտպանության, կառավարելու և տնտեսական պայմանների տեսակետից բաժանվում է անտառապետությունների, իսկ սրանք շրջանների և

յենթաշրջանների: Անտառապետությունների բաժանում հաստատում է հողօգտագործման: Շրջանների և յենթաշրջանների թիվը և նրանց սահմանները վորոշում են անտառային մարմինները:

53. Անտառապետություններում տնտեսությունը և անտառները կառավարելու պարտականությունը դրվում է անտառապետների վրա. սրանց ոգնելու համար նշանակվում են անտառապետների ոգնականներ:

54. Անտառապետություններում վերաբնություն կատարելու, անտառապետների տրնտեսական գործունեյությունը ղեկավարելու և համաձայնեցնելու համար նշանակվում են անտառային տեսուչներ:

55. Անտառների շրջանների և յենթաշրջանների պահպանության համար նշանակվում են անտառային ալագ և կրտսեր անտառապահներ:

56. Անտառային մարմինների իրավասությունը, նայելով անտառային մասնագետների և այլ անտառային աշխատակիցների իրանվունքներն ու պարտականությունները վորոշվում են հողօգտագործման կանոնադրությամբ:

ՀԱՏՎԱԾ VI

ԱՆՏԱՌՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

57. Հրդեհներից, ինքնագլուխ անտառահա-

տություններից և այլ ամեն տեսակ վնասումներից, նայելով ապրիրնի ոգտագործումից անտառների պաշտպանության պարտականությունը դրվում է Անտառային Վարչության և անտառապետների վրա:

58. Անտառապետի և նրա ոգնականի դեկավարությամբ անտառապահները հսկում են իրենց պահպանության հանձնված անտառաշրջանների վրա: Անտառապահները պարտավոր են սահմանված նախագիշտությունները և միջոցները ձեռք առնել անտառների հրդեհների և այլ սպառնացող վտանգների դեմ:

59. Անտառապետների վրա պարտականություն է դրվում հսկելու, վոր հատուկ նպատակ ունեցող անտառներում կիրարկվեն անտառների պաշտպանության կանոնները և վոր անտառամասերում կատարվող անտառահատումները չըկրեն ավերիչ բնույթ:

60. Անտառապետները, նրանց ոգնականները և անտառապահները զինված են հրազենով և ինքնագլուխ անտառահատներին ձեռքառելով և խուզարկությունների ու հափշտակված փայտեղենի գրավման վերաբերմամբ ունեն միլիցիայի իրավունքներ, ինչպես նայել քաղաքացիների ոգնությանը դիմելու ու հրդեհներ հանգցնելու միջոցին:

61. Անտառապետները, նրանց ոգնականները և անտառապահներն իրենց տեսչության յենթակա անտառամասերում հսկում են վորսորգության կանոնների անշեղ գործադրության վրա:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի

Նախագահ՝ Ս. Համբարձումյան

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի

Քարտուղար՝ Հ. Տաթևյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հ.Ս.Խ.Հ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՎՍՐՉՈՒԹՅԱՆ

ԱՌԸՆԹԵՐ ԽՈՐՀՐԴԻ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏԵՍՈՒՉՆԵՐԻՆ

1. Անտառտնտեսական կարեվոր խնդիրները քննելու, այլ և առանձին անտառապետությունների գործունեյությանն ուղղություն տալու և նրանց գործունեյությունը համաձայնեցնելու համար Հ.Ս.Խ.Հ. Հողօգտագործատի Անտառային Վարչության առընթեր կազմվում է անտառային խորհուրդ:

2. Անտառային Խորհուրդը կազմվում է Հողօգտագործատի կողմից ժողովի մեկ անդամի կամ նրա տեղակալի՝ Անտառային Վարչության պե-

տի՝ նախագահութեամբ անտառային տեսուչներից և անտառշինարարութեան տեսչից: Վերջինս Անտառային Խորհրդին նիստերին մասնակցում է այն դեպքում միայն, յերբ քննվում են անտառշինարարութեան վերաբերող խնդիրներ: Բացի վերը հիշած անձերից, նախագահը կարող է խորհրդակցան ձայնի իրավունքով հրավիրել նայել այնպիսի կողմնակի անձանց, վորոնք իրենց ցուցմունքներով ոգտակար կարող են լինել քննութեան յենթակա խնդիրների ուղիղ լուծմանը:

3. Անտառային Խորհրդի նիստն որինական է համարվում, յերբ անտառտեսուչների առկա թվի կեսը մասնակցում է:

4. Անտառխորհրդում գործերը քննվում են խորհրդի անդամների կամ Անտառվարչութեան պետի հանձնարարութեամբ նույն վարչութեան պաշտոնյաների վաղորդք կազմած ղեկուցադրերով և վճռվում են ձայների մեծամասնութեամբ:

5. Անտառխորհուրդն ընտրում է իր մշտական քարտուղարը, վորին և հանձնարարում է արձանագրութեւնները կազմելու և խմբագրելու աշխատանքը:

6. Տարակարծութեան դեպքում արձանագրվում են խորհրդի նիստին ներկա անդամների

թե՛ մեծամասնութեան և թե՛ փոքրամասնութեան կարծիքները, ընդ վորում Անտառխորհրդի ամեն մի անդամ մեծամասնութեան հետ տարակարծիք լինելու դեպքում կարող է արձանագրութեւնն իրեն ստորագրութեանը հանձնելու պահից հաշված՝ յերեք որվա ընթացքում ներկայացնել իր զրավոր առանձին կարծիքը, վորը և կցվում է արձանագրութեանը: Առանձին կարծիք չներկայացնող անդամները կհամարվեն մեծամասնութեանը հարողներ:

7. Անտառային Խորհրդում քննութեան առնված գործերի հետագա ընթացքը հանձնարարվում է նախագահին կամ նրա տեղակալին:

8. Խորհրդի նիստ հրավիրում է Անտառային Վարչութեան պետը, բայց այն հաշվով, վոր Անտառտեսուչների և անտառապետների ներկայութեւնը չփնտսի նրանց մյուս պաշտոնական պարտականութեւնների կատարման:

9. Անտառային Խորհուրդը քննում է. —

ա. Ըստ անտառապետութեւնների տնտեսական յենթադրութեւնների նախահաշիվները հաջորդ տարվա համար, համաձայն տնտեսական այն ծրագիրների, վոր ներկայացնում են անտառապետները:

բ. Հաստատված նախահաշիվներով բաց թողած գումարներն ըստ անտառապետութեւնների

րի բաշխելու նախագիծը:

գ. Ներքին և արտաքին շուկաների պայմանների համաձայն անտառամասերը պետական շահերի տեսակետից լիակատար և ձեռնառու չահագործման հետ կապված խնդիրները:

դ. Բաց թողնվելիք փայտանյութերի նախահաշիվների նախագծերը:

ե. Կազմում ե նոր սակագների, ինչպես յեվ անտառամասերն ու շրջաններն ըստ սակագների կոպարների դասավորելու նախագծերը:

զ. Փայտեղենի վաճառման յեվ պետական անտառների ամեն տեսակի ոգտագործման պայմանների նախագծերը, ինչպես յեվ հաջորդ տարվա համար փայտեղենի առելտրի տեղական պայմանների համաձայն՝ փայտեղեն վաճառելու նպատակով նշանակվելիք աճուրդի տեղի ու ժամանակի մասին յեղած յենթադրությունների ծրագիրները:

ը. Հաջորդ տարվա ընթացքում անտառաշինարարության վերաբերյալ յենթադրվելիք աշխատանքների ծրագիրը, վոր կազմվում ե անտառաշինարարության հրահանգների համաձայն:

թ. Յուրաքանչյուր տեսչական շրջանում անտառապետությունները հաջորդական մանրագին վերաքննության յենթարկելու ծրագիրները

և ատառային տնտեսության տեխնիքական կարեվոր խնդիրները:

Յեթե Անտառային Խորհուրդը քննում ե տեխնիքական ախպիսի խնդիրներ, վորոնց նկատմամբ անտառտեսչի և անտառպետի միջև տարակարծություն կա և, յեթե Խորհուրդը անտառապետի ներկայությունը անհրաժեշտ ե գտնում, ապա հրավիրում ե նրան միմիայն խորհրդակցական ձայնի իրավունքով:

Վերը հիշված բոլոր խնդիրներն անպայման քննության պիտի առնվեն Անտառային Խորհրդում և ապա ընթացք տրվեն սահմանված կարգով:

10 Խորհրդի անդամներին իրավունք ե վերապահվում Անտառխորհրդի նախնական քննության դեմ նաև անտառտնտեսության վերաբերող այլ խնդիրներ:

11. Անտառային Խորհրդի բոլոր վորոշումները որիական ույժ են ստանում Հոգժողկոմատի կողմից հաստատությունն ստանալուց հետո միայն:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր
Ա Ն Տ Ա Ռ Ա Յ Ի Ն Տ Ե Ս Ո Ւ Չ Ն Ե Ր Ի Ն
Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Հ Ի Մ Ո Ւ Ն Ք Ն Ե Ր

1. Ամեն մի անտառտեսչի հսկողութեան ե հանձնվում անտառապետութիւնների վորոշ շրջան, վորպեսզի. —

ա. Մանրամասն վերաքննութիւն կատարի այդ շրջանը մտնող անտառապետութիւններում:

բ. կատարի նույն անտառապետութիւններին վերաքննող այն բոլոր կարգադրութիւնները, վոր անում ե Անտառային Վարչութիւնը:

գ. Մշտական հսկողութիւն ունենա իր տեսչութեան հանձնված շրջանի անտառապետութիւններում տարվող աշխատանքների վրա ե աջակցի Անտառային Վարչութեան՝ ուղղութիւն տալու անտառապետների գործունեութեանը:

2. Անտառային տեսուչները բնակավայր հաստատում են իրենց հսկողութեան հանձնված շրջանում Վ հատկապես այն կետերում, վոր մատնանշում ե Անտառային Վարչութիւնը: Յեթե Անտառային Վարչութիւնն անհրաժեշտ ե գտնում, անտառտեսուչները բնակութիւն

կարող են հաստատել Յերեվան քաղաքում:

3. Անտառապետութիւնների բաժանումն ըստ շրջանների ե շրջաններն ըստ տեսուչների՝ կատարվում ե Անտառային Վարչութեան համաձայնութեամբ:

Գ Լ Ո Ւ Խ Ի

Ա Ն Տ Ա Ռ Ա Դ Ե Տ Ա Ռ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ը Վ Ե Ր Ա Ք Ն Ն Ե Լ Ո Ւ Մ Ա Ս Ի Ն

4. Վերաքննութիւնն ընդգրկում ե անտառապետի ամբողջ գործունեութիւնը ե կայանում ե հետեւյալում՝

ա. Վերաքննվում են անտառապետութեան դիվանը ե ստացվող բոլոր գումարները.

բ. Մանրամասն դնվում են անտառապետութեան սահմաններում գտնվող անտառները, կողմնակի արդյունքները, սկտական կառուցվածքները, այլ ե այլ կարգի շենքերը, պետական շարժական գույքը, ինչպես ե անտառ-կուլտուր ե ամեն տեսակի այլ աշխատանքները: Անտառային տեսուչը պարտավոր ե հսկել, վոր անտառապետութեան մեջ առաջուց նկատված թերութիւնները վերացվեն: Անտառտեսուչը պարտավոր ե ամեն մի վերաքննութեան արդյունքներին մասին Անտառային Վարչութեան ներկայացնել զեկուցումներ:

ԴԻՎԱՆԻ ՎԵՐԱԲՆՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՇՎԵՏԱՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

5. Անտառտեսուչն ստուգում է Անտառապետութեան բոլոր գումարների մուտքն ու յեւթը՝ փաստաթղթերով և հերթական հաշվետվութեամբ, նաև պարզում է կանխիկ գումարները, այլ և այլ տեսակի անտառտնտեսների և պահանջագրերի բլանկները:

6. Անտառտեսուչը հետևում է, թե անտառապետները ժամանակին են մուծում պետական գանձարանը անտառային յեկամուտները, զբաղականները և ամեն տեսակի այլ գումարները. յեթե քննութեանը պարզում է, վոր գումարները ժամանակին չեն մուծված, ապա անտառտեսչի կարգադրութեամբ ուղարկվում են ըստ պատկանելիության:

7. Անտառտեսուչն ստուգում է, թե արդյոք սահմանված հրահանգների, կանոնների և առանձին կարգադրութեանների համաձայն են տանում անտառապետները զբաղական և նյութեղենի մատյանները, առանձին ուղադրութեան գարձներով թե պետական գումարների և թե անտառապետութեան տնունով գանձարաններում ի պահ տրված գումարների կանոնավոր յիւ և մուտքի վրա:

8. Յեթե անտառապետը ավանս է ստացել, ապա անտառտեսուչն ստուգում է այդ ավանսի յիւ և մուտքը՝ պարզելով, թե ժամանակին են ներկայացնում նման գումարների հաշվետվութեանները և ավանսի մնացորդ գումարները ժամանակին են մուծվում պետական գանձարանը վարկը վերականգնելու համար:

9. Անտառային տեսուչն ստուգում է, թե անտառապետները ժամանակին են Անտառային Վարչութեանը ներկայացնում հերթական հաշվետվութեանները:

10. Անտառային տեսուչը պարտավոր է պարզել՝ ա) ամսական հաշվետվութեանը հետքովոր անտառատնտեսները և զբաղական այլ փաստաթղթերը ժամանակին են ուղարկվում, բ) ուղիղ է կատարված ըստ սոմսների անտառապետութեանը հասանելիք՝ գումարների հաշվարկը և գ) ժամանակին են ստուգվում անտառանյութերի պատրաստման աշխատանքները:

11. Անտառտեսուչն ստուգում է պարզում է՝ արդյոք անտառներում թույլատրված կողմնարդյունքները կանոնավոր են ստացվում:

12. Անտառտեսուչը ստուգում է պարզում է՝ թե արդյոք պետական գանձարանից անտառային պաշտոնյաների աշխատավարձի կանոնա-

վոր են պահանջվում և ոռճիկները իր ժամանակին են բաշխվում:

13. Դրամական և նյութեղենի մատյաններն ստուգելուց հետո անտառատեսուչը նույն մատյաններում համապատասխան մակագրություն է անում:

ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

14. Անտառատեսուչը քննում է անտառապետի գործավարությունը և առանձին ուշադրություն է դարձնում. —

ա. Ուղիղ է տարվում գործավարությունը և ժամանակին են կատարվում ընթացիկ գործերը:

բ. Ուղիղ են տարվում ինքնագլուխ հատումներին և առհասարակ Անտառային Որենագրքի խախտման վերաբերող գործերը:

գ. Կարգին են պահվում բոլոր տեսակի հատակագծային, անտառաշինարարական և այլ փաստաթղթերը, հատակագծի վրա անտառապետն արել է հարկ յեղած լրացումները, նշանակված են հատման տեղերը, անտառաշինարարական տեղեկագրի մեջ անտառաշինարարության հրահանգներով պահանջված նշանառումները ժամանակին են արվում:

դ. Անտառների հաշվառման տեղեկագրերի

և կահամատյանների մեջ նշանառումները ժամանակին են տարվում:

ե. Անտառապետների գործավարները վերջին համապատասխան են իրենց կոչման:

ԱՆՏԱՌՆԵՐԻ ԶՆՆՈՒԹՅՈՒՆԸ

15. Անտառների զննությունը վերաքննության ամենից եյական մասն է կազմում և նպատակ ունի վորոշելու. —

ա. Վոր աստիճանի կանոնավոր են պահպանվում անտառները:

բ. Վոր չափով բավարար զրության մեջ են անտառները:

գ. Անտառաշինարարության տեղեկագրերի և անտեսական ծրագիրների յենթադրությունները վոր չափով է կատարում անտառապետը:

ԱՆՏԱՌՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄՆ

16. Անտառային տեսուչը պետք է պարզի, թե անտառապետը, նրա ողնականները և անտառ պահախումբը բավարար չափով ծանոթ են իրենց հսկողությանը հանձնած անտառների վիճակին:

17. Անտառային տեսուչը պիտի պարզի, թե անտառապետը և նրա ողնականները հաճախ են յայցելում անտառները և հսկում անտառապա-

վոր են պահանջվում և ոռճիկները իր ժամանակին են բաշխվում:

13. Դրամական և նյութեղենի մատյաններն ստուգելուց հետո անտառատեսուչը նույն մատյաններում համապատասխան մակագրութիւն եւ անում:

ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

14. Անտառատեսուչը քննում եւ անտառապետի գործավարութիւնը և առանձին ուշադրութիւն եւ դարձնում. —

ա. Ուղիղ եւ տարվում գործավարութիւնը և ժամանակին են կատարվում ընթացիկ գործերը:

բ. Ուղիղ են տարվում ինքնագլուխ հատումներին և առհասարակ Անտառային Որենսդրել խախտման վերաբերող գործերը.

գ. Կարգին են պահվում բոլոր տեսակի հատակագծային, անտառաշինարարական և այլ փաստաթղթերը, հատակագծի վրա անտառապետն արել եւ հարկ յեղած լրացումները, նշանակված են հատման տեղերը, անտառաշինարարական տեղեկագրի մեջ անտառաշինարարութիւն հրահանգներով պահանջված նշանառումները ժամանակին են արվում:

դ. Անտառների հաշվառման տեղեկագրերի

և կահամատյանների մեջ նշանառումները ժամանակին են տարվում:

ե. Անտառապետների գործավարները վորքան համապատասխան են իրենց կոչման:

ԱՆՏԱՌՆԵՐԻ ԶՆՆՈՒԹՅՈՒՆԸ

15. Անտառների զննութիւնը վերաքննութիւն ամենից ելական մասն եւ կազմում և նպատակ ունի վորոշելու. —

ա. Վոր աստիճանի կանոնավոր են պահպանվում անտառները:

բ. Վոր չափով բավարար դրութիւն մեջ են անտառները.

գ. Անտառաշինարարութիւն տեղեկագրերի և անտեսական ծրագիրների յենթադրութիւնները վոր չափով եւ կատարում անտառապետը:

ԱՆՏԱՌՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄՆ

16. Անտառային տեսուչը պետք եւ պարզի, թե անտառապետը, նրա ողնականները և անտառ պահախումը բավարար չափով ծանոթ են իրենց հսկողութիւնը հանձնած անտառների վիճակին:

17. Անտառային տեսուչը պիտի պարզի, թե անտառապետը և նրա ողնականները հաճախ են յայտելում անտառները և հսկում անտառապա-

հախմբի գործունեությունն Վրա, այլ և պիտի պարզի, թե անտառապահախմբերը վնաս չափով դիտել իր պարտականությունները, կանոնավոր և տանում անտառապահախմբի համար սահմանված արձանագրությունները տեղերը: Անտառատեսուչներն ստուգում են անտառապահներին տրված անտառահատման հրամանները, համեմատելով տոմսերի հետ:

18. Անտառատեսուչն առանձին ուշադրություն է դարձնում, թե չկան արգելք անտառներում ինքնակամ հատումներ, վորոնց մասին համապատասխան արձանագրություններ չեն կազմված: Նման հատումներ նկատելու դեպքում անտառատեսուչը կարգադրում է կադմել արձանագրություններ և ընթացք առ սահմանված կարգով: Անտառատեսուչը պարզում է, թե վնաս չափով ամբողջությամբ են պահվում բռնագրաված անտառանյութերը:

19. Անտառատեսուչը պարզում է, թե անտառներում կողմնակի ոգտագործման ինքնակամ դեպքեր տեղի չեն ունենում:

20. Անտառատեսուչը պիտի պարզի, թե անտառային պաշտոնականները պետական անտառներում բռնված հրդեհների և նրանց ծավալման դեմ որենքով և տեղական պարտադիր վորոշումներով սահմանված միջոցները ժամանակին:

են ձեռք առնում, ինչպես նաև ժամանակին են կազմում հրդեհների մասին արձանագրություններ և որինական ընթացք տալիս նրանց:

21. Անտառատեսուչը պիտի պարզի անտառապետություն մեջ փաստատու միջատների, պարագիտային սունկերի և այլ փաստատուների յերևալու դեպքերը ժամանակին են նկատվում և այդ փաստատուների տարածման դեմ համապատասխան միջոցները ձեռք են առնվում. այդպիսի փաստատուներ նկատելու դեպքում անտառատեսուչը անտառապետի հետ միասին քննություն է առնում նրանց դեմ կովելու անհրաժեշտ միջոցները և այդ մասին հաղորդում Անտառային Վարչության:

22. Անտառները գննելու դեպքում անտառատեսուչը պիտի պարզի՝ ամբողջությամբ են պահպանվում սահմանանիշերն ու ընդհանրապես անտառաժառանգների արտաքին սահմանները և խախտումներ նկատելու դեպքում համապատասխան միջոցներ ձեռք առնի վերականգնելու անտառների որինական սահմանները:

ԱՆՏԱՌՆԵՐԻ ԾԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ

23. Անտառատեսուչը քննում և պարզում է, թե անտառատեսուչության հաստատված նախահաշիվների և ծրագրերների համաձայն են կա-

տարվում անտառամասերից փայտի բաց թողումները և փայտը վաճառելու ժամանակ պահպանվում են սահմանված որենքների, կանոնների և կարգադրությունների պահանջները:

24. Փայտեղենի պատրաստման (ըստ տարածության, կոճղերի, քանակի և այլն) հաշվառքի կիրառման ճշտությունն ստուգելու պարտավորությունն ընկնում և անտառտեսչի վրա, ընդ վորում նա առանձին ուշադրություն է դարձնում, թե տվյալ անտառապետության մեջ ընդունված ձևը վնր չափով և ապահովում անտառանյութերի կանոնավոր և ստույգ հաշվառքի հնրավորությունները:

25. Անտառապետը պիտի պարզի, թե արդյո՞ք անտառապետները կամ նրանց ոգնականներն ստուգում են անտառապետների կողմից կատարած ծառերի համարակալումն ու չափումը և արդյո՞ք կանոնավոր և վորոշվում բաց թողած փայտեղենի գնահատումը և նրա քանակը ուշադրություն դարձնելով, վոր ճշտությամբ գործադրվեն սակագները և կոպարները, վորի համար ստուգում են մի կամ մի քանի անտառապետության հատաբաժինները:

26. Անտառապետը տեղում ստուգում և պարզում և, թե շինարարություն կատարված անտառամասում անտեսական ծրագրից շեղում

ներ չեն կատարվում և քննության և տննում այն խնդիրը, թե նոր ստեղծված պայմանների հետեանքով և կանոնավոր անտառատեսությունն ենեալու անհրաժեշտության տեսակետից կարիք չկա, արդյոք, վորևե ձևով փոփոխելու անտառահատման չափն ու կարգը և այս վերջին դեպքում անտառապետն անտառապետի հետ միասին քննում և անտառահատման կարգը փոփոխելու հարցը և իր մանրամասն պատճառաբանությունը ներկայացնում և Անտառային Վարչության հայեցողությանը:

27. Անտառային տեսուչը անտառապետի հետ միասին բազմակողմանի քննում և այս կամ այն անտառամասում անտառանյութի վոշ բավարար սպաուման պատճառները և պարզում և այն միջոցները, վորոնց կիրարկությունն անհրաժեշտ և համարվում այդ անտառամասներն արդյունավետ դարձնելու համր: Այդ միջոցներից են՝ կանոնավորել ցամաքով և ջրով փայտեղեն տեղափոխելու ճանապարհները, աջակցել գյուղի ազգարնակության մեջ տնայնագործության համապատասխան ձեռնարկների դարգացման, սահմանել փայտեղենի վաճառման այնպիսի ձևեր, վորոնք ամենից համապատասխան են տնդական պայմաններին, ասպարեզ քաշել ձեռներեց մարդիկ փայտաղոցարաններ, անտառ-

տեխնիքական և այլ գործարաններ կառուցելու համար:

28. Անտառտեսուչը պիտի ուշադրություն դարձնի, թե փայտեղենի համար նշանակված սակագինը համապատասխանում է տվյալ շրջանի փայտեղենի գներին:

29. Անտառտեսուչն ուշադրություն պետք է դարձնի հատման տեղերի կանոնավոր բնորոշության վրա, մանավանդ այն անտառամասերում, վորտեղ տակավին անառ շինարարական աշխատանքներ չեն կատարած՝ հաշվի առնելով անտառամասի վոշ միայն տնտեսական, այլ և անտառտնտեսության պայմանները:

30. Անտառտեսուչն առանձին ուշադրություն պիտի դարձնի թե ինչպես են բաց թողնվում հրահանգով ցույց տված մեռած, ու փասված ծառերը և պիտի պարզի. —

ա. ժամանակին և կանոնավոր տեղեկություններ է ստանում Անտառային Վարչությունը վնասված ծառերի քանակի և բռնած տարածության մասին, վորպեսզի այդպիսիք բաց թողնվեն դալար ծառերի փոխարեն:

բ. կանոնավոր են կատարվում առանց աճուրդի փայտեղենի բաց թողումները և վոր չափով անհրաժեշտ է յեղել աճելությունն սպառած լինելու չափ փասված փայտեղենի նա-

խահաշվից դուրս բաց թողնումն և արդյոք այդ հանգամանքը բղխել է փասված ծառատունկերի խրական դրությունից:

գ. Խնչ միջոցներ են ձեռք առնված ժամանակին և անտառտնտեսության համար շահավետ յեղանակով սպառելու այդ մեռած ծառերը և վորքան նրանք համապատասխանում են տված արդյունքին:

31. Անտառտեսուչն ուշադրություն պիտի դարձնի, թե անտառները խնամելու նպատակով անտառտնտեսության համար վոր չափով նպատակահարմար և համապատասխան միջոցներ են գործադրվում անտառների մաքրման, նոսրացման ղեպքում և արդյոք պահպանվում են սահմանված կանոնները:

32. Անտառտեսուչը պիտի պարզի՝ ժամանակին են հեռացվում սերմատու ծառերը, նախահաշվով բաց թողնվելիք հասակն առած ծառերը և վոր չափով այդ կարգի ծառերն ըստ իրենց հասակի, աճման աստիճանի և վորակի համապատասխանում են փայտանյութեր բաց թողնելու վերաբերող հրամանին, նաև անտառշինարարական տեղեկագրում նախատեսված ցուցմունքներին:

33. Անտառտեսուչն առանձին ուշադրություն պիտի դարձնի փայտանյութերը արտո-

նյալ կարգով և ձրիաբար բաց թողնելու վրա, հետեւելով, վոր այդ կարգով անտառնյութերը բաց թողնելու դեպքում խստիվ պահպանվեն գոյություն ունեցող կանոնները:

34. Ծառերը հատով վաճառելու դեպքում անտառտեսուչն ուշադրութիւն պիտի դարձնի, թե կիրառվում են սահմանված կանոնները և ծառերի հայտարարված դինը համապատասխանում է նրանց իրական արժեքին, այլ և անտառապետները միջոցներ ձեռք առնում են տեղական ազգաբնակչութեանը ժամանակին ծանուցելու ծառերի առաջիկա հատափաճառի մասին:

35. Անտառտեսուչն ստուգում է, թե վորքան ուղիղ է կիրառված նախահաշիվը, այլև ստուգում է տնտեսական յեղանակով կատարված անտառմշակութեան աշխատաւորները և տեղն ու տեղը պարզում է, թե վոր չափով են ուղիղ և տնտեսաբար կատարված այդ աշխատանքները: Յեթե անտառապետութեան մեջ կան պահեստներ, փայտապրոցարաններ և պետական այլ ձեռնարկներ, ապա անտառտեսուչը պարտավոր է մատչաններով ստուգել այդ ձեռնարկները դրամի և նյութեղենի հաշիվները՝ մատչանների տվյալները համեմատելով պահեստում յեղած տուճեղենի նյութերի հետ, այլև պարզել, թե

վոր չափով ուղիղ են տարվում այդ մատչանները:

36. Անտառտեսուչը գնում է անտառային կողմնակի արդյունքները և պաշտոնեական հոդաւորները և այդ հոդաւորներն անտառային մյուս տարածութիւնից բաժանող սահմանների շրջանի կանոնավորութիւնը, այլև պարզում է՝ արդո՞ք կողմնակի ոգտագործումը կատարվում է համաձայն պայմանագրերի և պաշտոնեական հոդերինը՝ համաձայն որենքի:

37. Անտառտեսուչն ուշադրութիւն է դարձնում, թե անտառապետի անտեսական գործունեութեան յենթակա կողմնակի ոգտագործումը ըստ տմենայնի լավ շահագործելու համար անտառապետը ձեռք է առնում համապատասխան միջոցներ և կիրարկվում են արդյոք այդ շահագործման վերաբերող բոլոր կանոնները, նաև պարզում է, թե կարիք դրացվում է արդյոք փակելու կողմնակի ոգտագործման այդ կամ այն տեսակը՝ անտառն աճեցնելու պայմանով:

38. Յեթե անտառամասում կան արդյունաբերական ձեռնարկներ, ինչպես են՝ փայտեղենի տեխնիքական մշակութեամբ զբաղվող գործարաններ, սղոցարաններ, ջրաղացներ, մեղվանոցներ, քարահանքեր և այլն, ապա անտառտեսուչն ստուգում է պարզում է, թե արդո՞ք այդ ձեռ-

նարկների տերերը անշեղ կիրառում են կնքված պայմանագրերը և դրանց համար գոյություն ունեցող կանոնները:

39. Յեթե անտառամասում թույլատրված է կողմնակի արդյունքների վորև ե տեսակը, որինակ՝ անասուններ արածեցնելը, մեղվանոցներ կազմակերպելը, վորս անելը, պտուղներ հավաքելը և այլն, ապա անտառտեսուչն ստուգում և պարզում է, թե այդ անոնը կատարվում է արդ ոք սահմանված կանոններով:

ԱՆՏԱՐԱՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ՅԵՎ ՄԵԼԻՈՐԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

40. Անտառտեսուչը պիտի սլարզի, թե վոր չափով բավարար վիճակում է գտնվում հատված տարածությունների վերանորոգումն ըստ անտառտեսուչության ընդունված կարգի և յեթե նա գտնվում է վոչ բավարար վիճակում, ապա անտառտեսուչն իր կարծիքը՝ թե ինչ միջոցներով կարելի յե հաջողությամբ իրականացնել վերանորոգումը տվյալ անտառամասում՝ արձանագրում է անտառների վերաքննության տեղեկագրում:

41. Անտառտեսուչն ուշադրություն է դարձնում անտառապետի գործունեյության վրա ծառատերմերի պատրաստման գործում, պարզում

է, թե անտառապետության մեջ լավորակ սերմեր են պատրաստվում և բավարար քանակով: Յեթե անպառապետության մեջ կան սերմերի պահեստներ, անտառտեսուչն ստուգում է այդ պահեստների գործարքների կանոնավորությունը և ուշադրություն է դարձնում, թե վորչափ լավ են պահվում սերմերը:

42. Յեթե անտառամասում մշակույթներ են կատարվում, ապա անտառտեսուչը պարզվում է, թե այդ մշակույթները կատարվում են արդյոք համաձայն հաստատված յենթադրությունների, գոյություն ունեցող տնկարանները վոր չափով համապատասխան են անտառապետության կարիքներին, այդ մշակույթների վրա արած ծախքերը վոր չափով ճիշտ և նպատակահարմար են կատարվում և արհեստական անտառանկման համար գործադրված ձևերը վոր չափով են համապատասխանում տեղական պայմաններին, այլ և մշակույթների վերակացունները, մնայուն բանվորները և պահապանները վոր չափով են համապատասխան իրենց կոչման, իսկ նախկին տարիներում յեղած մշակույթների մասին հայտնում է իր կարծիքը տեղ-տեղ համարքի միջոցով ստուգելով նրանց հաջողության աստիճանը:

43. Յեթե անտառամասում կատարվում են

մեկիորատիվ աշխատանքներ՝ որինակ հողի ցածաբման, անտառների մաքրման, փոխադրության ճանապարհների, առուների կառուցման և այլն, ապա անտառտեսուչն ստուգում է, թե վեր չափով հաշող և հաստատված նախահաշիվներին համապատասխան են կատարված և կատարվում աշխատանքները, ստուգում են նաև, թե այդ աշխատանքների վրա վորքան ճիշտ ու նպատակահարմար են գործադրված գումարները:

ՊԵՏԱԿԱՆ ԾԵՆԲԵՐ ՅԵՎ ԸՆԲԺԱԿԱՆ ԳՈՒՅԲ

44. Անտառտեսուչը կահամատյանով գննում է անտառապետության մեջ յեղած պետական շենքերը և պարզում, թե բարեկարգ են պահվում այդ շենքերը և ժամանակին են նորոգվում: Յեթե վերաքննության միջոցին անտառապետության մեջ նոր շենքեր են կառուցվում կամ հենքի նորգումն է կատարվում, ապա անտառտեսուչը պարզում է կառուցման և նորոգման վերաբերող գործարքների նպատակահարմարությունն ու հաշողությունը:

45. Անտառտեսուչը պարզում է, թե ուղիղ են տարվում շարժական գույքի մատյանները, ամբողջությամբ են պահպանվում թե դիվանդում և թե անտառապետության պաշտոնյաների մոտ յեղած շարժական գույքը (մատյաններ, մշա-

կույթի գործիքներ, հողաչափական գործիքներ, հրագեն և այլն):

ԱՆՏԱՌՊԱՀԱՆՈՒՄԲ

46. Անտառտեսուչը պարզում է, թե անտառպահախումբը գիտե՞ իր պարտականությունները, ծանոթ է անտառապահության կանոնադրության պահանջներին, բավարար՞ ժարգված է կարգապահության, պահպանում է անտառպահախմբի համար սահմանված տարազը, առանց սահմանված զրավոր հրահանգի, անտառամասում չի՞ թուլյարում արդյոք վոր և է ոգտագործում և արդյոք պարզ հասկանում է իր պարտականություններն անտառապահության, անտառնյութի բաց թողման և իր հսկողության հանձնած անտառը ջանն ընդունելու, հանձնելու և այլնի վերաբերմամբ:

47. Անտառտեսուչը գննում է անտառպահախմբի պաշտոնեական հողաբաժինները և պարզում է, թե պահախումբ կանոնավոր է ոգտվում այդ հողերից և այդ հողերը պարզ նշաններով են՞ բաժանված անտառներից և այլ կարգի հողերից:

48. Անտառտեսուչն ստուգում, պարզում է, թե անտառպահախումբը ժամանակին է բավարարվում ռոճկով: Միաժամանակ նա պար-

գում ե, թե սահմանված այլ կարգի բավարարումից (վառելանյութից, անասուններ արածայնելուց և այլն) ոգտվելու դեպքում վոր և ե անկանոնություն տեղի չի ունենում:

ՀԱՏՈՒԿ ՀԱՆՁՆԱԲԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

49. Իր հսկողության յենթակա շրջանի անտառապետությունները վերաքննելուց զատ՝ Անտառային Վարչությունն անտառտեսչի վրա կարող ե գնել նաև հատուկ հանձնարարությունների կատարման պարտականությունը թե իր շրջանի և թե այլ շրջանների անտառապետությունների վերաբերյալ: Ամեն անգամ, յերբ անտառտեսուչն այցելում ե անտառապետին ոտուգում ե գրամական գումարները և մատյանները, նաև պարզում ե, թե չէն մնացել անկատար Անտառային Վարչության կարևոր և շտապ հանձնարարությունները: Իբրեւ տուանձին հանձնարարություն անտառտեսչի վրա կարող ե գրվել նաև վոչ իր տեսչության յենթակա շրջանի մի կամ մի քանի անտառապետություններում մանրամասն վերաքննություն կատարելու պարտականությունը:

Գ Լ ՈՒՄ II

ԱՆՏԱՌՏԵՍՉԻ ՀՐԱՎԱՆԳԶԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

50. Անտառտեսուչների վրա պարտականություն ե ղրվում՝

ա. Մասնակցել Անտառային Վարչության առընթեր Խորհրդի աշխատանքներին:

բ. Իրենց տեսչության յենթակա շրջանների սահմանում տեղեկություններ և տվյալներ ժողովել փայտանյութերի շուկաների գրության, նրանց պահանջի և գների փոփոխման մասին, այլ և այն պայմանների մասին, վորոնք նշանակություն ունեն շրջանում անտառտեսուչյան զարգացման և բարելավման տեսակետից:

գ. Անտառտեսուչյանը հանգամանորեն ծանոթանալու, ինչպես և անտառներում տարվող աշխատանքի կանոնավոր ընթացքին հետևելու նպատակով ըստ կարեվոյն հաճախ այցելել իրենց տեսչության յենթակա շրջանների անտառամասերը:

դ. Հաջորդ տարվա տնտեսական յենթադրությունների վերաբերյալ տեղում խորհրդակցում ե ամեն մի անտառապետի հետ և գրի ե առնում տնտեսական ծրագրի բոլոր յենթադրությունների մասին իր յեզրակացությունը, խոր-

հուրդներ ե տալիս անտառապետներին առաջիկա աշխատանքների մասին և այդ աշխատանքները տանելու հաջորդական կարգն ե սահմանում, աշխատանքները կատարելու տեխնիքական այս կամ այն ձևի կիրարկման առավելությունն ե վերոշում և այլն:

ե. Անմիջապես դեկավարում ե նոր նշանակված անտառապետների գործունեությունը և տեղական առանձնահատուկ պայմանների համեմատ ծանոթացնում ե նրանց տվյալ շրջանի անտառներում տնտեսական միջոցների կիրարկությունը:

51. Անտառապետություններում ծագած բոլոր թյուրիմացությունները, հարցերը և առաջադրանքներն ըստ հնարին անձամբ լուծում են անտառատեսուչներն իրենց այցելության միջոցին և այդ մասին հաղորդում են Անտառային վարչության: Անտառատեսուչների և անտառապետների միջև գրադրություն կատարվում ե անհրաժեշտ դեպքերում միայն:

Գ Լ Ո Ի Խ III

ԱՆՏԱՌՏԵՍՈՒՂՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

52. Անտառապետները, ոգնականները և անտառադահախումբը պարտավոր են կատարել անտառտեսչի բոլոր որինական պահանջները: Յեթե անտառապետը անտառտեսչի վորևե առաջարկը ապորինի ե գտնում, ապա նա այդ մասին հայտնում ե անտառտեսչին և նախ քան առաջարկի կատարումը, անտառտեսչի միջոցով հարցի վերջնական լուծումը հանձնում ե Անտառվարչության:

53. Դիվանի քննությունը անտառապետը պիտի ներկա լինի, իսկ անտառները զննելու և Անտառային վարչության առանձին հանձնարարությունները կատարելու դեպքում անտառտեսուչը հրավիրում ե անտառապետին կամ նրա ոգնականին միայն անհրաժեշտության դեպքում:

54. Յեթե անտառտեսուչն անտառապետության այս կամ այն աշխատակցի գործունեություն մեջ անկանոնություն կամ ապորինություն ե նկատում, ապա նա շտապ միջոցներ ե ձեռք առնում այդ թերությունները վերացնելու և այդ

մասին հաղորդում ե Սնտառային Վարչության:

65. Վերաքննության արդյունքների մասին անտառտեսուչը, վերաքննությունն ավարտելուց, անմիջապես տեղեկագիր ե ներկայացնում Սնտառային Վարչության: Տեղեկագրի մեջ անտառտեսուչը ներկայացնում ե անտառապետության աշխատակիցների գործունեությունը թե ղրական ե թե բացասական կողմերը, այլ ե իր յեզրակացությունն այն մասին, թե անտառապետության աշխատակիցների գործունեությունը վնաս չափով հաջող կարելի ե համարել:

56. Յեթե վերաքննությունը պարզում ե, վոր զեղծումներ ե կատարված, անտառտեսուչը անտառապետից կամ նրան յենթակա աշխատակիցներից բացատրություն ե պահանջում ե այդ բացատրությունն իր յեզրակացությամբ ուղարկում ե Սնտառային Վարչությանը:

57. Անտառտեսուչն անցյալ տարվա իր գործունեությունը համառոտ տեղեկագիրը ներկայացնում ե Սնտառային Վարչության վոչ ուշ հաջորդ տարվա սեպտեմբերի 1-ից:

58. Յեթե անտառտեսուչը նկատում ե կամ նրան տեղեկացնում են, վոր այս կամ այն անտառապետություն մեջ անկարգություններ են կատարվում, պարտավոր ե քննել անկարգությունների պատճառները, միջոցներ ձեռք առնել

վերացնելու նրանց ե այդ ամենի մասին հաղորդել Սնտառային Վարչության:

59. Անտառտեսուչը պատասխանատու յե իր հսկողությունը հանձնած անտառապետություններում կատարվող անկարգությունների ու զանցառությունների համար, ահա թե ինչո՞ւ անտառապետին ուղղված ամեն մի մեղադրանքի հետ կապված ե անտառտեսչի գործունեությունը քննությունը:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Ք. Ս. Խ. Հ. ԱՆՏԱՌԱՅԻՆ ՊԱՀՍԽՄԻ

I. ՆՐԱ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Անտառների անմիջական պահպանություն համար անտառապահներից կազմվում ե անտառային պահախումբ:

2. Անտառների նպատակահարմար պահպանություն համար յուրաքանչյուր անտառապետություն ըստանվում ե շրջանների ե տուանձին անտառաբաժինների. առաջինը հանձնվում ե ավագ անտառապահին, իսկ յերկրորդը՝ կրտսեր անտառապահին:

3. Յուրաքանչյուր անտառապետության մեջ անտառային պահախումբը անմիջապես յեն-

թարկվում է անտառապետին և նրա ոգնակա-
նին:

4. Անտառային պահախումբը պարտավոր
է իմանալ Հանրապետութեան Անտառային Ու-
րենագրքով, անտառների պահպանութեան կա-
նոնադրութեամբ և ներկա հրահանգներով իր
վրա դրված բոլոր պարտականութիւնները:

5. Անտառային պահախումբը պարտա-
վոր է պահպանել աշխատավորական դիսցիպլի-
նայի բոլոր պահանջները և անշեղ ու անհա-
պաղ ի կատար ածել իր անմիջական իշխանու-
թեան բոլոր որինական կարգադրութիւնները:

6. Անտառային պահախմբին անտառնե-
րի պահպանութեան համար տրված գէնքերն ու
փամփուշտերը վոչ մի դեպքում մեկ ուրիշին
հանձնվել չեն կարող:

7. Զենքի հաճելը, ինչպես նաև նրա վե-
րանորոգութեան տալը՝ կատրվում է միայն ան-
տառապետի հրամանով:

8. Հարկը պահանջածին անտառային պա-
հախմբին իրավունք է տրվում է գէնք գործ
ածել:—

ա. Նրա վրա տեղ ունեցած գինված հարձա-
կումը հետ մղելու, կամ գինված դիմադրու-
թիւնը ճնշելու համար:

բ. Հարձակումը հետ մղելու կամ դիմա-

դրութիւնը ճնշելու համար թեկուզ վոչ գին-
ված, սակայն կատարված մի քանի, կամ նույն
խակ մի հոգու կողմից, բայց տեղի ունեցած
այնպիսի պայմաններում ու հանգամանքներում,
յերբ պահախմբին սպառնում է բացարձակ
վտանգ:

դ. Յերբ բռնված մարդիկ կփորձեն փախ-
չել և այլ միջոցներով անհնար կլինի նրանց
հասնել ու բռնել:

դ. Անտառներում թափնված ավազակներին
և դասակարգներին ձերբակալելու ժամանակ, յերբ
դրա համար տեղական իշխանութեան որդաննե-
րի կողմից անտառային պահախմբին կհրա-
հանգվի:

9. Բոլոր տեսակի անտառորինախախտու-
ների ժամանակ տեղի ունեցած ընդհարումների
միջոցին անտառային պահախումբը պիտի
ձեռք առնի իրենից կախված բոլոր միջոցները՝
գէնքի չդիմելու և այն գործածելու միմիայն
ծայրահեղ դեպքում:

10. Անտառային պահախումբը իր պաշ-
տոնական պարտականութիւնները կատարելու
ժամանակ միշտ իր վրա պիտի կրի իր գէնքը,
վորպիսին պիտի լինի բարեկարգ վիճակում:

11. Անտառային պահախումբը ոգտվում
է միլիցիայի իրավունքներով ինքնակամ հատու-

ներին ձերբակալելու, ինչպես նաև գողացված անտառանյութերը գտնելու համար խուզարկություններ կատարելու և բռնադրավելու ժամանակ, և անտառային հրդեհները հանգցնելու դեպքում՝ քաղաքացիներին կոչ անելիս:

12. Անտառային պահախումբին խիստ կերպով արգելվում է իր հսկողությանը հանձնված անտառամասից՝ առանց անտառապետի թույլտվության՝ բացակայել, բացի հարևան պահակին ոգնություն ցույց տալու դեպքերից: (Հրդեհների, նկատված հատուկների և այլ ժամանակ):

13. Անտառային պահախումբը ազատվում է բոլոր տեսակի պարտադիր աշխատանքներից, վորոնք կարող են արգելք հանդիսանալ իր պաշտոնական պարտականությունների կատարելուն:

14. Յուրաքանչյուր անտառապահի ըստ հնարավորին տրվում է իրեն հանձնված անտառամասի հատակագիծը:

15. Անտառային պահախումբը ունի զգեստի հաստատված հատուկ տարազ և նշան:

16. Անտառային պահախումբը կառավարությունից իրեն հատկացրած բնակարանից և այլ շենքերից, ինչպես նաև ագարակային հողամասից՝ ոգտվում է ձրիաբար, սակայն անտա-

ռապետության մեջ ծառայելու ժամանակ միայն:

Անտառային պահախումբը պարտավոր է խնամքով վերաբերվել իր ոգտագործմանը տրամադրված շենքերին և նրանց մեջ գտնված պետական գույքին, պահպանելով այդպիսիք կանոնավոր կերպով և ժամանակին կատարելով պահանջված փոքրիկ վերանորոգությունները:

ԾԱՌՈՐՈՒՄՈՒՆ. — Պահախումբին հատկացրած շենքերի կառուցումը և հիմնական վերանորոգությունը կատարվում է կառավարության հաշվին:

17. Ազատ ու ծառերով չբռնված սարածությունից անտառային պահախումբին մշակելու համար հատկացվում է մինչև յերեք դեսյատին հողամաս: Սակայն ծայրահեղ դեպքում, յերբ հողը չի բավականանում Անտառային Վարչության թույլտվությամբ իրավունք է տրվում փոքր տարածությամբ թփուտները մաքրել:

Հատկացրված հողամասը պիտի գտնվի իր հսկողությանը հանձնված անտառամասի սահմաններում և հեռու չպիտի լինի նրա բնակավայրից: Ծառայությունից հեռացված պահակները զրկվում են հողաբաժինից ոգտվելու իրավունքից:

18. Պահախումբը Անտառային Վարչու-

թյան սահմանած նորմաներով՝ վառելափայտ պատրաստում ե ձրիաբար:

Վարսորդությամբ, ձկնորսությամբ, մեղվաբուծությամբ պարապելը, անտառներում անասուններ արածեցնելն և այլ կողմնարդյունքներից ոգտվելը, անտառային պահախմբին թույլատրվում ե Անտառային Վարչության հատուկ կանոններով ու նորմաներով:

19. Անտառային պահախմբերին և նրանց ընտանիքներին արգելվում ե իրենց անձնական կարիքների համար փայտանյութ պատրաստելը և ընդհանրապես անտառարյուծաբերությամբ զբաղվել:

1. ԿՐՏՍԵՐ ԱՆՏԱՌԱՊԱՅՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ԱՆՏԱՌՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

20. Կրտսեր անտառապահին պահպանելու համար հանձնված անտառամասը կոչվում ե պահաբաժին: Կրտսեր անտառապահը անմիջապես յենթարկվում ե ավագ անտառապահին:

21. Կրտսեր անտառապահը լավ պիտի ծանոթ լինի իրեն հանձնված պահաբաժնի և նրա սահմանների հետ ու չպիտի թույլ տա, վոր նրանք անտառակալեն, պիտի հետևի, վոր անխախտ մնան սահմանագծերը և սահմանանշանները, չը

փնտալեն հեռախոսային ցանցը, հրդեհադիտանոցները, սահմանային ցանկապատերը, առուներն և կամուրջները:

Բացի այդ՝ նա պիտի իմանա ճանապարհները, դետերը, լճերը, ջրամբարներն և այլն, ինչպես նաև հարևան պահաբաժինները և նրանց վրա հսկող անտառապահների ապրելու տեղերը ու մոտակա բնակավայրերը:

22. Կրտսեր անտառապահները, վորքան կարելի յե, հաճախ պիտի շրջագայեն իրենց պահաբաժինը և հատկապես այն վայրերը, վորտեղ հեշտությամբ կարող են տեղի ունենալ անտառահատումներ և այլ տեսակի անտառաորինախախտումներ, ինչպես նաև հրդեհի տեսակետից վտանգավոր վայրերը:

23. Անտառաորինախախտման յուրաքանչյուր դեպքի մասին կրտսեր անտառապահը պարտավոր ե անմիջապես հայտնել իր ավագ անտառապահին:

24. Կրտսեր անտառապահը անմիջապես զեկուցում ե ավագ անտառապահին իր պահաբաժնում թագնված դառալիքների, ավազակների և այլ կասկածելի մարդկանց մասին և այդպիսիներին բռնելու ժամանակ պարտավոր ե ցույց տալ աշակցություն:

2. ԻՆՔՆԱԿԱՄ ՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

25. Անտառի ինքնակամ հատումների և ամեն տեսակի անտառաորինախախտումների դեպքում՝ կրտսեր անտառապահը պարտավոր երոնել հանցավորներին:

26. Յեթե ինքնակամ հատողին հաջողվել է կտրած փայտը անտառից դուրս հանել, ապա պիտի նրան հետևել մինչև գյուղը և այնտեղ բռնագրավել, վորոշել փայտի քանակը և այն ստորագրությամբ հանձնել տեղական իշխանությանն ի պահպանություն:

Յեթե անտառապահը տվյալներ ունի կասկածելու, վոր վորեւե տեղում թաղցրած փայտ և այլ փայտանյութեր կան, ապա տեղական իշխանության ներկայացուցիչների հետ կատարում է խուզարկություն և բռնագրավում:

3. ԱՆՏԱՌՆԵՐԻՅ ԱՂՈՐԻՆԱԲԱՐ ՈԳՏՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

27. Անտառապահը պարտավոր է չթողնել, վոր փայտ կտրեն և պահեստատեղերից դուրս տանեն, ծառերը կացնահարեն, կեղևահան անեն ու խազեն, նոր ճանապարհներ անցկացնեն, անասուններ արածացնեն, խոտ հարեն, ծառերի բների մեջ մեղուներ պահեն և մեղվարուծու-

թյամբ պարապեն և առհասարակ առանց սահմանված թույլտվության՝ ողտվեն անտառի և անտառի հողի կողմնարդյունքներից. ինչպես՝ խոտից, ծառապտուղներից, քարից, ավազից, տորֆից և այլն:

4. ԱՆՏԱՌՆԵՐԻ ՀՐԴԵՂՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

28. Անտառապահը պարտավոր է բոլոր միջոցներով չեղոքացնել ու հրդեհների առաջն առնել, հաճախ այցելել այն վայրերը, վորտեղ հեշտությամբ կարող է հրդեհ բռնկել. ինչպես՝ յերկաթուղու և իճուղիների ճանապարհների մոտերը, հավաքած փայտատեղերը, չմաքրված հատատեղերն և այլն:

29. Հետևել, վոր առանց բացառության անտառում գտնվող բոլոր քաղաքացիները զգուշանան հրդեհներ առաջացնող բոլոր գործողություններից:

30. Հետևել, վոր անտառում կրակ անելու բոլոր դեպքերում կրակ արվի թույլատրված ժամանակը միայն, այն ել ծառերից կամ թափուկից յերկու սաժենից վոչ մոտիկ հեռավորության վրա, վոր կրակն անելու տեղը մաքրված լինի տերևներից, խառերից և այլ հեշտությամբ բռնկվող մանրուկներից, վորպեսզի հետո կրակը հանգցնվի, այրվող ածուխը տրորվի և հողով

ծածկվի: Ածուխ պատրաստել կարելի յե միայն անտառապետի թույլատրված տեղում: Մաստիկ քամու կամ վտանգավոր չոր յեղանակին՝ անտառում կրակ անել չթույլատրել:

31. §§ 29—30 խախտման դեպքում անմիջապես համապատասխան միջոցներ ձեռք առնել կրակը հանգցնելու, իսկ հանցավորի հետ վարվել ըստ §§ 70—73:

32. Խոտերի կամ ծղոտատեղերի այրելը, տակ-ռիկները արմատախիլ անելն ու մաքրելը և առհասարակ անտառում այն բոլոր աշխատանքները, վորոնք կապված են կրակ անելու հետ՝ թույլ տալ անտառապետից հրաման ներկայացնելուց հետո, և այդ աշխատանքները կատարողներին պահանջել առանձին զգուշություն, ինչպես որինակ՝ առուներ փորել, աշխատանքի տեղերում հողը հերկել, պատրաստի ունենալ բահեր, դույլեր, ավելներ և այլն:

Ծանոթություն.— Ծառերի հատուկներից գոյացած մնացորդների մաքրելը կատարվում և առանձին կանոններով:

33. Յեթե անտառում հրդեհ ե ծագել, ամեն միջոց գործ դնել այն անմիջապես հանգցնելու համար, սկզբում անձամբ կամ մոտակա գյուղերի քաղաքացիների ոգնությամբ: Հրդեհի տարածման դեպքում գյուղխորհուրդների միջոցով

ոգնության կանչել շրջակայքի քաղաքացիներին: Հրդեհի մասին անմիջապես տեղեկություն տալ ավագ անտառապահին, անտառապետին և ոգնականին, միևնույն ժամանակ հայտնել հրդեհի տեղի, չափի, տեսակի և ձեռք առած միջոցների մասին:

34. Մասնակցել իրեն հանձնված անտառ-մասում ծագած հրդեհը հանգցնելու աշխատանքներին մինչև ավագ անտառապահի, անտառապետի և նրա ոգնականի հրդեհավայր դալը, դեկավարել հրդեհի դեմ կռվելու կանչվածների աշխատանքները, ցույց տալով նրանց ջրամբարների, ճահճուտների տեղերը և փոսերը, առանձպես պահպանելով դեռահաս փշատերև ծառերը: Թեթև հրդեհի ժամանակ կրակը հողով ծածկել և նրա տարածման առաջ առնող հողաշերտը մաքրել տերևներից, խոտերից և թափուկներից:

5. ԱՆՏԱՌԱՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՓԱՅՏԱՆՅՈՒԹԵՐԻ ԲԱՅ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

35. Անտառահատուկները և փայտեղենից ամեն տեսակի ոգավելը անտառապահը պարտավոր ե թույլ տալ միայն սահմանված տոմսը և անտառապետի գրավոր հրամանը ներկայացնելուց հետո, ինչպես նաև չթույլ տալ կատարելու այդ աշխատանքները հրամանում ցույց տված

ժամանակամիջոցը լրանալուց հետո:

Մատնանշված փաստաթղթերը մնում են անտառապահի մոտ այդ աշխատանքների տեղադրության ամբողջ ժամանակամիջոցում:

36. Հաշվառության յենթակա հատումների ժամանակ հսկել, վոր հատվի այն իսկ քանակությունը, այն տեսակը և այն չափերով, այլև այն տեղերում, ինչպես վոր այդ ցույց ե տրված անտառահատման տոմսերում: Պահանջել, վոր հատված փայտերը դարսվեն հրամանում ցույց տված տեղերում, սաժեններով ըստ տեսակների՝ չխառնելով զանազան տեսակները միմիանց հետ, իսկ գերանները, ձողերը, բրերը, շախը և այլն նույնպես դարսել ըստ տեսակների, վորպեսզի հաշվառության համար հարմար լինի:

37. Մասնակցել փայտանյութերի, անտառահատումների ստուգմանը և ավագ անտառապահի ու փայտհատողի հետ միասին ստորագրել ստուգման արձանագրությունը:

38. Հաշվառման յենթակա հատումների ժամանակ պատրաստված փայտանյութերն ըստ քանակի թույլ տալ դուրս տանել անտառապետի կամ նրա կողմից դրա համար նշանակված մարդու ստուգումից, անտառապետի կողմից հատուկ հրաման, կամ արտահանելու թույլատվության հրամանի վրա՝ նրա կողմից արված համա-

պատասխան մակագրությունն ստանալուց հետո:

39. Հետեվել, վոր ըստ տարածության հաշվառումով կատարվող հատումների ժամանակ հատումները կատարվեն տոմսով հատկացրած տարածությունների վրա, վորպեսզի չհատվեն և չվնասվեն տոմսում և հրամանում հատկապես մատնանշված ծառերը:

40. Տոմսում նշանակված ժամկետից ուշ՝ չթույլ տալ փայտ պատրաստել և դուրս տանել, իսկ պատրաստված փայտը թույլ տալ արտահանել ու անտառապետի ցույց տված ճանապարհներով:

41. Հետեվել, վորպեսզի մաքրելու համար սահմանված կանոնների համաձայն փայտ պատրաստողները հավաքեն փայտամշակումից մնացած ճյուղերը, տաշեղները և այլն, իսկ վորտեղ այդ բանը չի պահանջվում, հետեվել, վորպեսզի չլցվեն սահմանները, անտառային ճանապարհները, գետերը, առվակները, լճերը, մարգագետինները և առհասակ պահանջել, վոր փայտ պատրաստողները զեկավարվեն փայտ պատրաստելու կանոններով:

42. Մասնակցել հատատեղեր և հատաբաժիններ հատկացնելու, նրանց սահմանային ոյուների դասավորման և հատատեղերի վրա ծառերի հաշվառման ու սերմացու ծառերի դրոշման

աշխատանքներին, ինչպես նաև այն ծառերի գրողման, վորոնք բաց են թողնվելու զատ-զատ կամ կոճղների հաշվով:

43. Սարաղանի տերև հավաքելիս, ծառերը կեղևահան անելիս և այլն հետևել, վոր գործադրվեն այն ծառերը, վորոնք նշանակված են անտառապետի հրամանում:

44. Փայտ պատրաստողներին ցույց տալ թե հատման համար նշանակված անտառամասերը և թե բաց թողնվելիք ծառերը:

6. ՎՈՐՍՈՐԴՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԶԿՆՈՐՍՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆԸ ՀԵՏԵՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

45. Անտառապահը պարտավոր է հետևելու, վոր իրեն հանձնված անտառամասում ճշտորեն կիրառվեն վորսորդության և ձկնորսության մասին սահմանված կանոններ:

7. ԶԵՆԲԻՑ ՈԳՏՎԵԼՈՒ ՅԵՎ ՊԸՀՊԱՆԵԼՈՒ ԱՍՍԻՆ

46. Անտառապահը պարտավոր է իմանալ իրեն հանձնված զենքի գործածելը, ինչպես նաև այն քանդելը, նորից հավաքել և մաքրելը:

47. Զենքի գործածելու ամեն մի դեպքի և արձակած փամփուշտների թվի մասին կրտսեր անտառապահը զեկուցում է իր ավագ անտառահին:

48. Անտառապահը պարտավոր է հոգ տանել իր զենքի մասին, պահել մաքուր և նկատված անկանոնություն մասին զեկուցել ավագ անտառապահին:

49. Զենքը և փամփուշտները պահել տան մեջ՝ չոր և անվտանգ տեղում: Հրացանը պահել փականը բաց:

50. Իր հետ ապրող մարդկանց չը թույլ տալ վերցնել և ոգտվել իրեն վստահացած զենքից և փամփուշտներից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Կորցրած և փչացրած զենքի և փամփուշտների համար, վորը առկա չեն ունեցել անտառային պահախմբից անկախ պատճառներով, այսինքն՝ յերբ կորուստը կամ փչանալը առաջացել է այնպիսի պայմաններում, վորպիսին նա չեր կարող կանխել, անտառային պահախմբին, պետությունը հասած այդ ֆլասի համար պատասխանատվության չենթարկել: Իսկ յեթե վերոհիշյալ իրերի կորուստը կամ փչանալը առկա չեն ունեցել անտառային պահախմբի անզգուշություն հետևանքով, կորստի դեպքում՝ զանձեկ նրանից հոգուտ պետություն՝ զենքի արժեքը, իսկ փչանալու դեպքում՝ վերաբերողության ծախքը: Միաժամանակ հանցավորներին յենթարկել վարչական, իսկ ավելի կարևոր դեպքերում՝ նաև դատաստանական պատասխանատվության:

8. ԱՆՏԱՌՆԵՐԻ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

51. Անտառների նոսրացման ժամանակ անտառապետի ցուցմունքով անձամբ կամ բան-
վորների ոգնութեամբ նշանակել այն ծառերը,
վորոնք պիտի հատվեն և հետևել, վոր կտրե-
լուց հետո նրանք կանոնավոր դարսվեն:

52. Միջանցիկ հատումների ժամանակ
մասնակցել այն ծառերի դրոշմելուն և համա-
րակալելուն, վորոնք պիտի հատվին:

9. ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

53. Անտառապահը պարտավոր է հետևել
իրեն հանձնված սերմերի հավաքելու և մաք-
րելու աշխատանքներին, ինչպես և հող տանել
նրանց պահպանելու համար:

54. Հսկել բնանտառաձման նպաստող,
սերմանման, ծառատնկման և անտառմշակույթ-
ներին վերաբերեալ աշխատանքներին:

55. Հսկել տնկարանների հողի մշակմանը,
մարգերի պատրաստմանը և սերմերը ցանելու աշ-
խատանքներին, հետևել տնկարանների խնամքին,
մատղաշ տունկերի մշակությանը և պահել
տնկարանները բարեկարգ դրության մեջ:

10. ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅԳԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

56. Անտառապահը պարտավոր է անհապաղ
զեկուցել իր ավագ անտառապահին անտառի
փնասատու միջատների մասսայական յերեվալու
և բազմանալու դեպքերի մասին:

III ԱՎԱԳ ԱՆՏԱՌԱՊԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒ-ԹՅՈՒՆՆԵՐԸ

57 Ավագ անտառապահին հսկելու համար
հանձնված անտառամասը կոչվում է շրջան,
վորի մեջ մտնում են մի քանի անտառաբաժին-
ներ:

58 Ավագ անտառապահը անմիջականորեն
յենթարկվում է անտառապետին և նրա ոգնա-
կանին ու կատարում է նրանց բոլոր կարգադրու-
թյունները անտառ-տնտեսության և անտառ-
պահպանության մասին:

59 Ավագ անտառապահը պարտավոր է
իմանալ իր շրջանի և նրա մեջ մտնող անտառ-
բաժինների ոահմանները:

60. Հետևել անտառապահների պարտուկա-
նությունների ճշտիվ և կանոնավոր կատար-
մանը:

61. Անտառապահների պարտականություն-

ների վերաբերյալ բոլոր խնդիրների մասին հրա-
հարգներ տալ:

62. Ամեն տեսակի անտառորինախախտում-
ների հայտնաբերման ժամանակ, Անտառային
Վարչության վորոշած գույքի սահմաններում,
կազմել ակտեր և արձանագրություններ:

63. Անտառային Վարչության տված լիա-
զորությունների սահմաններում՝ ստուգել և վա-
վերացնել անտառային հատումները և պատրաս-
տված փայտանյութերը:

64. Հսկել անտառային և անտառ-կուլտու-
րական բոլոր աշխատանքներին, հետևել հատում-
ների և ամեն տեսակի պատրաստումների հա-
մար գոյություն ունեցող կանոնների կիրառ-
ման:

65. Կրտսեր անտառապահների պարտակո-
նությունների մասին §§ 24, 40, 44, 45, 47, 50,
52, 53 մատնանշված ցուցմունքները վերաբե-
րում են նաև ավագ անտառապահներին:

66. Նկատված ինքնակամ հատումների կամ
վորեն այլ անտառորինախախտումների դեպքում
ավագ անտառապահը իսկույն դադարեցնում է
այն և յեթե անհրաժեշտ է՝ համաձայն սույն
հրահանգների՝ ձերբակալում է անտառորինա-
խախտողին:

67. Սահմանված ձևով գրանցման յենթաբ-

գել իր շրջանում դանվող կրտսեր անտառապահ-
ների զենքերն ու փամփուշտները, բացի այդ
պահել փամփուշտների յել և մտից հաշիվը:

ՄԱՐԴԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ. — Փամփուշտն բանց-
նելու յուրաքանչյուր դեպքի համար կազմ-
վում է արձանագրություն: Ավագ անտառա-
պահը արձանագրություն կազմում է կրտսեր
անտառապահի, իսկ անտառապետը կամ
նրա ոգնականը՝ ավագ անտառապահի գործ-
ածած փամփուշտների վերաբերմամբ:

68. Վոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ
իր շրջանի անտառապահների մոտ յեղած զեն-
քերի քննությունն է կատարում: Անտառապե-
տին ներկայացվում է զենքերի զրույթյան մա-
տին ամեն ամիս զեկուցում:

69. Զենքերի անգործածելի դառնալու մա-
տին անհապաղ զեկուցվում է անտառապետին:

IV. ԱՆՏԱՌՈՐԻՆԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԿԱԶՄՎԵԼԻԲ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

70. Անտառորինախախտումների հայտնա-
բերման դեպքերում կազմվում է հատուկ արձա-
նագրություն, վորի համար հրավիրվում են
տեղական բնակիչներից յերկու հոգի:

Արձանագրությունների մեջ պիտի ցույց
տրված լինի. —

ա. Նրա կազմելու տարին, ամիսը և թիվը.
բ. Ո՞վ ե կազմել արձանագրությունը.
պաշտոնը, անունը, հայրանունը և ազգանունը.
գ. Տեղի ունեցած անտառորինախախտման
տարին, ամիսը և թիվը.

դ. Ո՞վ և վորտեղ ե կատարել անտառորինա-
խախտումը, անտառորինախախտողի անունը,
հայրանունը, ազգանունը, բնակավայրը և պա-
րապմունքը.

յե. Ընթերակաների անունը, հայրանունը,
ազգանուն և բնակավայրը.

զ. Ինչո՞ւն ե կայացել անտառորինախախ-
տումը.

ե. Վկաների ցուցմունքները, անունը, հայր-
անունը, ազգանունը և նրանց բնակավայրը:

ը. Մեղադրյալի բացատրությունները, յեթե
այդպիսիք նրա կողմից տրվում են, և այլն:

71. Արձանագրությունը ստորագրվում ե
նրա կազմողի, ընթերակաների, վկաների և ի-
րեն՝ անտառորինախախտողի կողմից: Վերջինիս
ստորագրալուց հրաժարվելու դեպքում՝ այդ մա-
սին մատնանշվում ե արձանագրության մեջ:

Ծանոթություն. — Յեթե ընթերականեր
չեն գտնվում, արձանագրությունը կարելի
յե կազմել նաև առանց նրանց:

72. Կազմված արձանագրությունը իսկույն

ուղարկվում ե անտառապետին վճատները հաշ-
վելու և հետագա ընթացք տալու:

73. Հարկը պահանջածին անտառային պա-
հախումքը դիմում ե միլիցայի աջակցության:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ Ն Ե Ր

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿՈՂՄՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՈԳՏԱԳՈՐ- ԾՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՄՔՆԵՐ

1. Անտառում, ամեն տեսակի յեկամուտ-
ները, վորոնք անմիջականորեն կապված չեն
փայտանյութ ստանալու ոգտագործման հետ, —
կազմում են անտառային տնտեսության կողմնա-
կի յեկամուտները: Այդպիսիք են՝ անասուններ
արածացները, խոտ հարելը, ընկույզ, հաճար, կա-
ղին և անտառային այլ ծառապտուղներ, անտա-
ռային թափված տերևներ հավաքելը, վորսոր-
դությունը, ձկնորսությունը մեղվապահությունը
և այլն, ինչպես նաև հողի վերին շերտերից
ստացված կավը, ավազը, քարը և այլ հանքային
նյութեր:

2. Կողմնակի յեկամուտների ոգտագործ-
ման գլխավոր նպատակն ե, առանց վճատելու

անտառային տնտեսութիւնը, բաժարարել տեղական աշխատավոր ազգաբնակչության կարիքները: Առ այդ անտառամասերի հնարավոր ոգտագործումը, նրանց չափի և կարգի իրականացումը վերոշվում են Անտառային Վարչության կողմից՝ խստիվ համաձայնեցրած տեղական պայմաններին, անտառային տնտեսության պահանջներին և սերքոնիշյալ ոգտագործման յուրաքանչյուր տեսակի նկատմամբ հիմնական կանոններին:

3. կողմնակի արդյունքներից վճարովի ոգտվելը ընդհանուր որենք ե, Անտառային Վարչության մշակած և Հողօգտագործարարի կողմից հաստատված սակագնի սահմաններում: Սակայն, ի նկատի ունենալով տեղական հատուկ պայմանները, վերոշ գեպքերում, այդ արդյունքների առանձին տեսակների ոգտագործումը՝ կարող ե թույլատրվել նաև ձրիաբար:

4. Մուրի, մուշի, մորու ու նման թփուտներ ի ու խոտաբույսերի պտուղների, նաև սունկեր հավաքելը՝ թույլատրվում կատարել ձրիաբար:

5. Կարմիր բանակայինների կարիքավոր ընտանիքներին, տարերային աղետներից տուժած կամ սոցիալական ապահովության խնամքի տակ գտնված քաղաքացիներին, գաղթականներին, ինչպես նաև չքավոր ազգաբնակչությանը

անտառային կողմնակի արդյունքների ոգտագործումը կարող ե թույլատրվել Անտառային Վարչության կողմից սակագնից մինչև 50 տոկոսի գեղջումով, բացառիկ դեպքերում նաև ձրի:

6. Անտառապետների թույլատրված արդյունքներից ոգտվելը կատարվում ե վոշ այլ կերպ, քան Անտառային Վարչության սահմանած հատուկ տոմսերով: Տոմսերի ձևը մշակում և հաստատում ե Անտառային Վարչութիւնը: Այդ տոմսերում ցույց ե արվում ժամանակը և ոգտագործման համար թույլատրված չափը, նրա տեղը և վճարը: Տոմսի մյուս յերեսում տպագրված են լինում ոգտագործության գլխավոր պայմանները, վորոնք պիտի կիրառվեն կապալառվի կողմից:

7. Տոմսերը պատրաստում ե Անտառային Վարչութիւնը և ժապավինյալ մատյանների ձևով ու Բանվորա-Գյուղացիական Տեսչության կնիքով կնքված՝ բաժանում ե անտառապետութիւններին: Տրված տոմսերը հատուկ հաշվով գրվում են տոմսերի յել և մտից մատյանում, իսկ ստացված գումարները ընդունած ընդհանուր կարգով գրվում են դրամարկղի գրքում: Նույն կարգով պահվում և ներկայացվում ե դրամական հաշվետվութիւնը:

8. Անտառապահները պարտավոր են հետե-

վելու կողմնարդյունքների ժամանակի և չափի ոգտագործման կանոնավորության, ինչպես նաև հետևելու, վոր շահագործողները կատարեն այն բոլոր պայմաններն ու պահանջները, վորպիսիք վորոշված են թույլատրված կողմնակի արդյունքների ոգտագործման համար: Ոգտագործողի կողմից այդ պայմանների ու պահանջների վոր-
ևե խախտման դեպքում անտառապահը կազմում է սկստ կամ արձանագրություն, անմիջապես միջոցներ ձեռք առնելով՝ կասեցնելու այդ խախտումները, վորոնք կարող են անտառի համար վնասակար հետևանքներ ունենալ: (Որինակ՝ մատղաշ անտառամասերում անասուններ արածացնելը):

2. ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԱՐԱԾԱՑՆԵԼԸ

9. Պետական անտառներում անասուններ արածացնելը բացառապես թույլատրվում է տեղական գյուղական ազգաբնակչությանը և անտառային ադմինիստրացիայի անդամների կարիքները բավարարելու համար, սակայն այն պայմանով, վոր այդ արածացնելը անտառների համար վնասակար հետևանքներ չունենա, ինչպես որինակ՝ ծառերի և տունկերի չորանալը, նրանց աճեցմանը խանգարելը և այլն:

10. Անասուններ արածացնել չի թույլատր-

վում չնորոգված հատատեղերում և բացուտներում, վորոնք հատկացրված են անտառացման համար, և այն հողամասերում, վորտեղ հողը փխրուն է և ավազոտ, ինչպես նաև մատղաշ ծառատունկերում, վորոնց հասակը սահմանվում է Անտառային Վարչության կողմից և արտատեղիների սահմանների վրա գտնվող հասակն առած նոսրացած անտառամասերում:

11. Արածացվող անասունների պատճառելիք վնասներից պաշտպանելու համար անասնատերերին կարող են պարտավորեցնել ցանկապատելու այն անառամասերը, վորտեղ արգելված է արածացնելը: Մրա համար պահանջվող անհրաժեշտ փայտեղենը պետական անտառներից բաց է թողնվում ձրիաբար:

12. Ինկատի ունենալով տեղական պայմանները, անասուններ արածացնելու վճարը կարող է սահմանվել կամ ըստ անասնազվի կամ ըստ գեսյատի:

13. Անասուններ արածացնելու համար անտառապետը տալիս է Անտառային Վարչության կողմից սահմանած տոմսը:

Ծանոթություն.— Գյուղական համայնքներին կամ առանձին գյուղերին անասուններ արածացնելու թույլտվության տոմսերը տրվում են հատուկ լիազորների անունով:

14. Մասնավոր մարդիկ անասուններ արածացնելու վճարը լիովին մուծում են սահմանված տոմսը ստանալիս, իսկ գյուղական համայնքներին և առանձին գյուղերին, վորոնց տնտեսական տկար վիճակի մասին վկայում է Գավհոդրածինը, — թույլատրվում վճարի հետաձգում, սակայն այն պայմանով, վոր տոմսը վերցնելիս մուծվի պահանջվող պետական հասույթի գումարի մի յերրորդը, իսկ մնացած յերկու յերրորդը՝ վոչ ուշ, քան նույն տարվա հոկտեմբերի 1-ը, պահպանելով § 12-ի իմաստը,

15. Անասուններին անտառ թողնելու, գուրս տանելու, ինչպես նաև ջրելու տանելը պիտի կատարվեն անտառային ադմինիստրացիայից ուղյց տված ճանապարհներով:

16. Անտառապետության ծառայողներին թույլատրվում է Անտառային Վարչության վորոշած սահմաններում անասուններ արածացնել, պահպանելով սակայն անտառային այդ տեսակի ոգտագործման համար կիրառվող բոլոր կանոններն ու որենքները:

17. Ծառերի փչացման և այլ որինախախտումների զեպքում հանցավորները, վորպես ինքնակամ շահագործողներ յենթարկվում են դատական պատասխանատվության:

3. ԽՈՏ ՀԱՐԵԼԸ

18. Անտառներում խոտ հարելը թույլատրվում է այնպիսի բացումներում, վորտեղ հափաղանց խոտակալելու հետևանքով այլ ևս չի կարող տեղի ունենալ բնական անտառաճեցում: Հակառակ դեպքում՝ խոտ հարելը արգելվում է:

19. Խոտ հարելու սակագինը՝ ըստ խոտհարքի տեսակի՝ վորոշվում է յուրաքանչյուր դեսյատինից:

20. Անտառներից խոտ գուրս տանելը կատարվում է անտառային ադմինիստրացիայից ուղյց տված ճանապարհով:

21. Կարիք ունցողների մեջ խոտհարքները բաշխվում են անտառապետների միջոցով՝ համաձայնությամբ գավհոդրածինների:

4. ՄԱՆՐ ԿՈՂՄԱՐԴՅՈՒՆԲՆԵՐ

22. Թափված տերևների ժողվելը, հողի վերի շերտերից ստացված տորֆի, կավի, ափազիքաքերի և այլն սակագինը սահմանվում է ըստ քանակի խորանարդ սաժենով (քարը, ափազը և այլն) և քառակուսի սաժենով՝ հողի մակերվոյթից վերցրածի համար (տորֆ և այլն):

Գալուկի և անտառային ծառապտուղների հավաքելու վճարը մեկ հոգու, կամ կոլլեկտիվի համար՝ սահմանվում է ըստ սեզոնի:

ԿԱՆՈՆՆԵՐ

Հ. Ս. Խ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ ՄԵՂ-
ՎԱՆՈՑՆԵՐԻՆ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
1.

Անտառներում մեղվանոցների կազմակեր-
պումը թույլատրվում է վորպես կողմնակի
անտառային ոգտագործում:

2.

Տեղական ազգաբնակչության կարիքներին
ընդառաջելու նպատակով Անտառ. Վարչության
համաձայնությամբ մեղվանոցների համար ան-
տառամասերի հատկացումը կատարում են ան-
տառապետները, սակայն այն վայրերում, վոր-
տեղ այդ հատկացումը հնարավոր է համարվում
և վորևէ վնաս չի բերում անտառային անտե-
սության:

3.

Հարթավայրերում մեղվանոցներն իրարից
պիտի լինին առնվազ յերեք վերստ, իսկ լեռնա-
վայրերում մեկ վերստ հեռավորության վրա:

4.

Այն շրջաններում, վորտեղ մեղվանոցները
գտնվում են անտառի սահմանի վրա, վարձակալ-
ներին թույլ է տրվում իրենց միջոցներով ձեռք
բերված նոյթերով սեփական կարիքների համար

կառուցել բնակատեղիներ, ծածկեր, մեղունների
համար ձմեռելու շենքեր, այլ և փորել ջրհորներ,
իսկ այնտեղ, վորտեղ մեղվանոցները գտնվում են
անտառի մեջ (բացուստներում) թույլատրվում է
կառուցել միմիայն փայտյա թեթև ու ժամանա-
կավոր բնույթ կրող շենքեր: Թույլատրվում է
նաև ունենալ բանջարանոց: Արգելվում է
ամեն տեսակ արդյունաբերական և անտառական
ձեռնարկ ունենալ հիշյալ անտառում, ինչպես
նաև անտառններ պահել ու արածեցնել:

5.

Մեղվանոցի շրջանում գտնվող ծառերի և
մացառների (թփուտի) հատել թույլատրվում է
անտառապետի համաձայնություեն ստանալուց
հետո՝ սահմանված վճարով:

6.

Մեղվապահների հանցանքով անտառում պա-
տահած հրդեհների հետևանքով անտառատնտե-
սության հասցրած վնասների համար պատաս-
խանատու յեն մեղվապահներն ընդհանուր
հիմունքով:

7.

Անտառային պահախումբը հետևում է մեղ-
վանոցների հատկացրած անտառամասերի ոգտա-
գործման պայմանների ճշգրիտ կիրառման, ար-
ձանագրում է ամեն մի խախտում և ծանուցում
անտառապետին:

8.

Մեղվանոցներ կազմակերպելու համար վարձակալությամբ անտառամասեր ստանալու իրավունք տրվում է միմիայն նրանց, վորոնք ունեն անոխազն 25 փեթակ:

9.

Մեղվանոցի համար անտառամասերը վարձակալության են տրվում վեց տարուց վոչ ավելի ժամկետով, ընդ վորում մեղվատնտեսությունը բարելավելու դեպքում վարձակալին է վերապահվում տվյալ շրջանի հետագա ոգտագործման իրավունքի գերադասությունը:

10.

Մեղվանոցների կազմակերպման համար անտառապետները հատկացնում են անտառային տնտեսության համար նշանակություն չունեցող ազատ բացուտները, ընդ վորում այդ բացուտների տարածությունը մեկ դեպատինից ավելի չպիտի լինի, դրանից ավելի տարածության պահանջի դեպքում պետք է խնդրել Անտառային Վաչության թույլատվությունը:

11.

Մեղվանոցին հատկացրած անտառամասի համար անտառապետները զանձում են Հողժողկոմատի, կողմից սահմանված կապալավարձը և սույն կանոններն ստորագրելուց հետո՝ կապալառվին

տրվում է կողմնակի ոգտագործման տոմս:

12.

Բոլոր մեղվանոցների համար անտառապետը պահում է գրացման հատուկ տետր, վորի մեջ ցոյց են տրվում՝ ա. մեղվանոցին հատկացրած անտառամասի №, նրա տեղը և տարածությունը, բ. ոգտագործման տոմսի №-ը, գ. կապալառվի անունն և ազգանունը, դ. կապալավարձի հատուցման պայմաններն և ոգտագործման ժամկետը, ե. վճարումների հաշվարկը (վճարների վերջնական հատուցումը):

13.

Մեղվանոցին հատկացրած անտառամասերի կապալավարձի վճարումը կատարվում է տարեցտարի և այն ել տարվա սկզբին: Կապալավարձը ժամանակին չմուծելու դեպքում կապալառվից ամսական տուգանք է զանձվում 3 տոկոսի չափով, ընդ վորում վոչ լրիվ ամիսը համարվում է իբրև լրիվ:

14.

Անտառամասի ոգտագործման համար սահմանված ժամկետից առաջ մեղվանոցը մի ուրիշին հանձնելը թույլատրվում է անտառապետի համաձայնութունն ունենալու դեպքում:

15.

Յեթե մեղվանոցի տերը ոգտագործման

պայմանները խախտում ե, այդ դեպքում անտառապետն իրավունք ունի հետ վերցնելու անտառամասը, պահանջելով կապալառվից տարեկան վարձի լրացուցիչ մասը:

16.

Մեղվանոցի տիրոջն իրավունք ե վերապահվում հրաժարվել անտառամասի ոգտագործումից: յերբ ցանկանա, ընդ վորում առաջուց մուծած վարձը նրան չի վերադարձվում:

17.

Ոգտագործման ժամկետն անցնելուց հետո, յեթե մեղվանոցի տերը հետագա ոգտագործման իրավունք չի ստանում անտառապետից, ապա նա պարտավոր ե իր բոլոր շենքերը հեռացնել անտառամասից, հալառակ պարագային այդ շենքերը մնում են հոգուտ անտառտնտեսության ե մեղվանոցի տերը վոչ մի փոխհատուցում չի ստանում, իսկ յեթե մեղվանոցին հատկացրած անտառամասը պետական-տնտեսական կարիքների համար Հոդժողկոմատը վերցնում ե հարկադրաբար, այդ դեպքում մեղվանոցի տիրոջը յերեք ամիս ժամանակ ե տրվում շենքերը հեռացնելու ե այդ ժամանակը լրանալուց հետո վերջինս անտառապետության ե անցնում մնացած շենքերը: ձրիաբար անցնում ե նաև անտառամասում տնկված բոլոր պտղատու ծառերը, վորոնց հատումը խստիվ արգելված ե:

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ՎՈՐՍԻ, ՆՐԱ ԶԵՎԵՐԻ ՅԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑԻ

Հրատարակվում ե համաձայն Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի յեվ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1924 թ. մարտի 28-ի գեկրեսի 5-րդ. կեսի (ժողովրդական Հայաստան) № 82):

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԻՍՈՒՆԳՆԵՐ

Հոդ. 1.—Հ. Ս. Խ. Հանրապետության սահմաններում յերեններն ու վայրի թռչունները Հանրապետության սեփականության են յեվ նրանց կանոնավոր ոգտագործումը պետական տնտեսության մի ուրույն ճյուղն ե կազմում:

Հոդ. 2 —Վորսորդական արդյունաբերության յերենների ու թռչունների բազմացումը, պահպանումն, կանոնավոր ոգտագործումն ե, բայց այն պայմանով, վոր վորսորդական տնտեսության ընդլայնման ու զարգացման համար արտադրողների անհրաժեշտ քանակը պահպանվի:

Հոդ. 3.—Յերենների ե թռչունների վորսըն որինական ե համարվում, յերբ նա տեղի ե

ունենում սահմանված ժամանակամիջոցում և թույլատրված ձևերով ու միջոցներով, համաձայն վորսորդության վերաբերյալ բոլոր կանոններին:

Հոդ. 4. — Վորսորդության իրավունք ունին Հանրապետության այն բոլոր Հանրապետական քաղաքացիները, վորոնք Հողօգտագործատի կամ նրա տեղական մարմինների վկայականն ունին:

Մանրութիւն. — 18-ից պակաս տարիք ունեցող քաղաքացիները վորսորդական վկայական կարող են ստանալ միայն այն դեպքում, յետևելով Հողօգտագործատու անձանց կողմից վորսորդական միութիւնների (ընկերութիւնների) վոչ պակաս յերկու անգամի գրավոր հանձնարարականն ունին, ընդ վորում վորս անում են հանձնարարողների յերաշխսվորութեամբ և պատասխանատվութեամբ:

Հոդ. 5. — Վորսորդական վկայականներ պատրաստում և քաղաքացիներին տալիս և Հողօգտագործատու պատշաճ կնիքով, առանց վորի վկայականներն անվավեր են:

Հոդ. 6. — Գործի հաշուութեան և վորսորդներին դուրսութիւն տալու համար այնտեղ վորտեղ Հողօգտագործատու չունի իր մարմինները, վորսորդական վկայականներ տալու իրավունք կարող և վերապահվել անձանց կողմից վորսորդական միութիւններին (ընկերութիւններին) մաս-

տակարարելով նրանց հարկ յեղած քանակութեամբ բանկներ վկայականի համար:

Միութիւնները տրված վկայականի արժեքի 10 տոկոսը պահում են իրենց դիմանական ծախքերի համար, իսկ մնացած գումարը, վորպէս Հողօգտագործատու անձի՝ ժամանակին մուծում են գալֆինբաժինները:

Հոդ. 7. — Վորսորդը պարտավոր և իր վկայականն առաջին հսկ պահանջին ներկայացել վորսորդական կանոնների գործադրութեան վերահսկող մարմիններին, այսինքն՝ Անտառային վարչութեան ներկայացուցիչներին, Հողօգտագործատու և միջնորդի լիազոր մարմիններին և Հողօգտագործատու անձի կողմից վորսորդական միութիւնների (ընկերութիւնների) անդամներին:

Հոդ. 8. — Յետևելով Հողօգտագործատու կամ վորսորդական միութիւնների միջնորդութեամբ գտնում և, վոր վորսորդական տնտեսութեան շահը պահանջում և այս կամ այն վայրում արգելել վորսը, ապա այդ մասին հանրապետութեան պաշտոնական օրգաններում լայն ծանուցում և արվում, ըստ վորում ցույց են տրվում. —

ա. Արգելված վայրի ճիշտ սահմանները.
բ. Արգելի ժամանակամիջոցը.

դ. Վորսալու միջոցների արգելված տե-
սակները և ապա ինչպիսի յերեւների ու թու-
շուկաների վորսն և թուլյաարվում:

ՎՈՐՍԱԼՈՒ ՅԵՂԱՆԱԿԸ

Հոգ. 9.—Խստիվ արգելվում է յերե-
ներ ու թուշուկներ (բացի գիշատիչներից) վոր-
սալ ծուղակներով, կապերով, ցանցերով, վա-
մերով և առհասարակ այնպիսի գործիքներով,
վորոնք շարդում, վնասում են վորսը, այլև վա-
հաններով և պատվարներով, վորոնց տակ թա-
նվում են վորսորդները:

Հոգ. 10.—Արգելվում է վորս անել
հանրամասն միջոցներով, որինակ՝ հրազենն այն-
պես սարքել, վոր ինքն իրեն կրակվի, արգել-
վում են հրդեհուկները փոս փորելը, թուշն շա-
տալ և այլն:

Հոգ. 11.—Արգելվում է գործածել
այնպիսի միջոցներ ու գործիքներ, վորոնցով
միանգամից կարելի չէ մեծ քանակությամբ
յերեւներ ու թուշուկներ վոջնչացնել: Այդ գործի-
քների շարքին պատկանում են՝ ցանցաձե-
վարմերը, թակարդները, ցանցապարկերը, վան-
դակապատերը և այլն: Արգելվում է նաև վորսը
հալածել, ուժառապառ անել սառցապատ տեղեր-
ում, հնձված յեղեգնուտներում: Վորսալ փե-

տուրները փոխող կամ սառած թուշուկներ, վորս
անել կրակով և այլ միջոցներով գիշեր ժամա-
նակ:

Հոգ. 12.—Բացի սույն կանոնների
16-րդ կետում հիշված գիշատիչ և վնասակար
թուշուկներից, խստիվ արգելվում է մյուս բոլոր
թուշուկների բները քանդել և ձվերը հաժարել:

ՎՈՐՍԻ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՅԸ

Հոգ. 13.—Ամբողջ տարին արգելվում
է վորսալ յեղջերուների և այծյամների եզերը,
ինչպես և նրանց ձագերը:

Հոգ. 14.—Մյուս յերեւներին և թուշու-
կներին (բացի գիշատիչներից) արգելվում է վոր-
սալ հետևյալ ժամանակամիջոցներում. —

ա) Վայրի արու այծերին՝ հունվարի 1-ից
մինչև ոգոստոսի 1-ը:

բ) Արու լեռնոչխարներին և այծերին, այլև
յերկու սեռի քարայծերին՝ հունվարի 1-ից
մինչև սեպտեմբերի 1-ը:

գ) Նապաստակին ու վայրի խոզերին՝ փե-
տրվարի 1-ից մինչև սեպտեմբերի 15-ը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այգիներ, բանջարանոց-
ների և ցանքների տերերին թույլ է տրվում ի-
րենց հողերի սահմաններում ոսկանել այդ կն-
դանիները ամեն ժամանակ:

դ) Ֆասիանի և Թուրաշի վորսը՝ փետրվար 1-ից մինչև նոյեմբերի 1-ը:

յե) Կաքավների և լեռնահավերի վորսը՝ փետրվարի 1-ից մինչև սեպտեմբերի 15-ը:

զ) Սաղերի և Կարապի վորսը՝ ապրիլի 1-ից մինչև սեպտեմբերի 15-ը:

ե) Բոլոր տեսակի բազերի, կտցարների շամբահավերի, ջրահավերի, լորի վորսը՝ ապրիլի 1-ից մինչև ոգոստոսի 1-ը:

ը) Ճահճային կտցարի և ժազմզոտ կտցարի վորսը՝ մայիս 15-ից մինչև ոգոստոսի 1-ը:

թ) Մյուս բոլոր յերենների և վայրի թռչունների վորսը՝ մարտի 1-ից մինչև ոգոստ. 1-ը:

Հոդ. 15.—Յեթե վորսորդն առանց հրաքանի հավորսակ շներին դուրս ե բերում վարժեցնելու, ապա դա վորս չի հաժարվում: Վորսին հետապնդելու համար թույլատրվում է բարակներին դուրս բերել յերենների վորսը թույլատրելու ժամանակից յերկու շաբաթ վոչ շուտ և վորսի ժամկետը լրանալուց մեկ որից վոչ ուշ:

Հոդ. 16.—Անվիճելիորեն զիշատիչ և վնասակար են համարվում հետևյալ գաղանները՝ ընձենին (հովազը), բորենին, գայլը, տըջը, աղվեսը, քավթարինեն, վայրի կատուն, կղաքիսը, ժանտաքիսը և աքիսը, իսկ թռչուններից՝ ար-

ծիվը, բազենները, ուրուրը, բուեճը, ճահճային մկնարազեն, ագռավը և կաչաղակը:

Ծանոթություն. — Հետևյալ կենդանիները՝ բոլոր մանր բազենները (մեղվական բազե, չարածայն բազե), բոլոր բուեները (բացի բուեճից), մկնարազենները (բացի շամբայինից), ճուրակները (բազենների գերակշռող մասը), թանկարժեք մորթ ունեցող գաղանները, ինչպես են ջրազիսը (Ջրսամույր), ջրաքիսը, սկյուռը և այլն անպայման ոգոսակար են և վնասակար յերենների ու թռչունների շարքը չպետք է դասել:

Հոդ. 17.—Վորս անելու համար սահմանված ժամկետը լրանալուց տաս որ հետո արգելվում է վորս տեղափոխել և ծախել:

Հոդ. 18.—Սույն կանոններից շեղումներ անողները յենթակա յեն քրեական պատասխանատվության համաձայն որենքների:

Հոդ. 19.—Սույն կանոնները ուժ են ստանում և կիրարկվելու յան են զրվում հրատարակման որից:

Հոդժողկոմի տեղակալ՝ Ս. Շադունց
Անտառկառավարիչ՝ Ս. Թադևոսեան

ԴԵԿՐԵՏ

ՀԱՍՆԱԶ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՑԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՍՈՐԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Վորսորդության իրավունք վայելում են բոլոր Հայաստան քաղաքացիները:

2. Զորամասերի վորսորդության վերաբերյալ կանոններ մշակվում են Հոգժողկոմատի, Ռազմական Կոմիտարիատի և Ներքգործժողկոմատի համաձայնությամբ:

3. Վորսորդական վկայականներ սահմանված վճարով տալիս են Հոգժողկոմատը կամ նրա տեղական մարմինները, նույնպես և վորսորդական միությունները Հոգժողկոմատի լիազորությամբ: Վկայականները պիտի լինեն անվանական և չեն կարող ուրիշին փոխանցվել:

4. Նախորդ հոգվածում հիշված տուրքը սահմանվում է ժողովրդական Կոմիտարների Խորհրդի հաստատությամբ և գործադրվում է վորսորդական տնտեսության բարելավման համար:

5. Հոգժողկոմատին իրավունք է տրվում. —

ա) Սահմանել վորսորդության մանրամասն կանոններ և հսկել նրանց գործադրության վրա, հրատարակել ցուցակն յերեսներ և թռչուն-

ների, վորոնց վորսալն արգելված է, և սահմանել վորս անելու ժամանակամիջոցները:

բ) Վարել վորսորդական տնտեսության հաշվառությունն ու վիճակադրությունը:

գ) Հայտարարել վայրերը, ուր վորսորդությունը մշտապես կամ ժամանակավորապես արգելված է, և հիմնել յերեսների և թռչունների բուժարաններ:

դ) Ներքգործժողկոմատի համաձայնությամբ հատուկ խմբեր կազմել գիշատիչ և փասաակար կենդանիների վոչնչացման համար:

ե) Մշակել վորսորդական միություններին նորմալ կանոնադրություն և հսկել նրանց գործունեությունը:

6. Բացի յերրորդ հոգվածում հիշված վճարից՝ վորսորդությունը ազատ է վորսե ալ տուրքից:

7. Որինական է համարվում՝ ա) հրացանով, բ) շներով ու գ) վորսական թռչուններով վորս անելը:

Մանրություն. — Յերեսներ և թռչուններ (բացի գիշատիչներից) վորսալը ծուղակներով, կապերով, ցանցերով, թակարդներով — արգելվում է:

Մանրություն. — Վորսորդի համար անհրաժեշտ հրազինանյութի քանակը սահմանում է Ներքգործժողկոմատը Հոգժողկոմատի համաձայնությամբ:

8. Հողժողովմատի հատուկ անվանական թուղթով (թյամբ), ուր հիշվում է վորսալու ժամանակամիջոցը, վորսի քանակը, և վոր ազատ է վորսորդության տուրքերից, իրավունք է տրվում գիտական նպատակով կենդանիներ ու թռչուններ վորսալու և նրանց բներն ու ձվերը հավաքելու:

9. Վորսորդական կանոնների գործադրության վրա հսկում են՝ ա) Հողժողովմատի տեղական մարմինները, բ) տեղական վարչական մարմիններն ու միլիցիան և գ) վորսորդական միությունները:

10. Վորսորդության վերաբերյալ կանոնները խախտողները յենթարկվում են պատասխանատվության Քրեյական Որենսգրքի 99 հոդվածի համաձայն:

11. Հողժողովմատին հանձնարարվում է հրահանգ հրատարակել ներքգործողիմատի հետ միասին սույն գեկրետի կիրարկության համար:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
նախագահ՝ Ս. Համբարձումյան
Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
նախագահ՝ Ս. Մրապիոնյան
(Լուկաօից)

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
քարտուղար՝ Հ. Յաջյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հ. Ս. Խ. Հ. ՀԱՆՐԱԿԵՑՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՊԱՀՈՒԹՅԱՆ

1.

Հանրապետության անտառների պահպանության գործն իրականացնելու, անտառահափշտակումը, ինքնակամ հատումները, տալանտառացումը, անկանոն անտառոգտագործումը, անտառների հրդեհը, անասունները չը թյուլատրված տեղերում արածացնելը, ապրիլի վորսը, ձուկ բռնելը, մեղվանոցները կազմակերպելը յեվ այլն կանխելու նպատակով կազմվում է զինյալ անտառային պահախումը:

2.

Հանրապետության անտառների պահպանության գործը միվորվելու յեվ ղեկավարելու, այլ յեվ կենտրոնի ձեռք առած միջոցները տեղերում իրագործելու համար, Հողժողովմատի անտառային վարչության մեջ սահմանվում է անտառապահության պետի պատոն:

3.

Անտառապետութիւններում անտառապահութեան գործը հանձնարարվում է անտառապետներին, նրաց ոգնականներին և ավագ ու կրտսեր անտառապահներին կազմված անտառապահախումբին:

4.

Անտառների պահպանութեան գործն անմիջականապէս կատարելու համար, անտառապետութիւնները բաժանվում են շրջանների յեւ յենթաշրջանների, ընդ վերում առաջինները յենթակա յեն ավագ և վերջինները՝ կրտսեր անտառապահների հսկողութեան:

5.

Ավագ և կրտսեր անտառապահների պաշտոնին ընդունվում են այն քաղաքացիները, վերոնշյալ՝

ա) Խիղիքապէս առողջ և 22-տարին լրացրած են.

բ) Գրագետ են.

գ) Քաղաքականապէս բավարար պարգայած և բարեհույս են.

դ) Զինվորական ծառայութեան ժամանակ անցրած են կամ անպայմանաժամ արձակուրդ ունին.

ե) Դատական կամ վարչական կարգով պատիժ չեն կրել.

Շանորոքում. — Այլ հավասար պայմաններում անտառային պահախումբի մեջ առաջին հերթին և գերադասորեն պաշտոն ստանում են նրանք, ովքեր զինվորական լրիվ ծառայութեանն ավարտել են.

6.

Անտառապահներին պաշտոնի ընդունում է անտառապետը տեղական Գաղութագրութեան կամ Շրջագրութեան մասնաճիւղի թեկնածուներից, վերոնշյալ հաստատվում են անտառապետութեան պետի կողմից: Անտառապահներին պաշտոնից տրամադրվում է անտառապետը որոշական հիմունքներով:

**ԱՆՏԱՌԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԻ
ԻՐԱՎՈՒՆԲՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**
7.

Անտառապետութեան պետի պարտականութիւններն են.

ա) Անտառապետութեան գործի կազմակերպման ընդհանուր ձեւավորումը գոյութիւն ունեցող հրահանգների համաձայն:

Շանորոքում. — Անտառապետութեան վերաբերյալ հրահանգների սահմանում անտառապետութեան պետի բոլոր կարգադրութիւնները պարտադիր են անտառապետների համար: Անտառապետութեան պետի կարգադրութիւններին համաձայն չլինելու դեպքում անտառապետները,

ընավ հառկայելով կարգադրութեան կատարումը, կարող են բողոքել Անտառային Վարչութեան:

բ) Մշակել և Անտառային Վարչութեան հաստատութեանը ներկայացնել անտառապահութեան վերաբերյալ հրամաններ ու հրահանգներ, այլ և այդպիսիք կիրառել կյանքում:

գ) Հսկել տեղերում անտառային պահախմբի կանոնավոր ոգտագործման վրա, հրահանգներ տալ պահախմբին անտառների պահպանութեան վերաբերյալ, կարգավորել հրազենը խնամքով պահելու, զենքի հետ վարվելու, այլ և անտառապահախմբի անձնակազմի կազմի կուլտ-կրթական աշխատանքներին վերաբերվող գործերը:

ԱՆՏԱՌԱՊԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անտառապետութեան սահմաններում անտառի պահպանման գործը կանոնավոր հիմունքների վրա դնելու համար, անտառապետին հանձնարարվում է.---

ա) Լավատեղյակ լինել, թե ինչ վիճակում է անտառապետութեան պահպանման գործը.

բ) Անձամբ ղեկավարել անտառների պահպանման գործը կանոնավոր հիմունքների վրա դնելու աշխատանքները.

գ) Հսկել հրազենի կանոնավոր պահպանման

և փամփուշտների նպատակահարմար գործադրութեան վրա.

դ) Հետևել, վոր անտառապահները կանոնավոր ու բարեխղճորեն կատարեն իրենց պարտականութիւնները.

յե) Վարել անտառապետութեան պահախմբի անձնակազմի կազմի այլ և հրազենի ու փամփուշտի հաշվառման գործը.

զ) Բացատրել անտառային պահախմբի անդամներին իրենց պարտականութիւնները, այլ և վարժեցնել նրանց զենքի գործադրութեան ու նրա հետ վարվելու գործին:

ԱՆՏԱՌԱՊԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔ Ե ՎԵՐԱՊԱՀՎՈՒՄ

8.

Սույն կանոնադրութեան I հոդվածում նշած անտառային որինախառնումների դեպքում ամեն անգամ հարց հարուցել հանցավորների նստանսիված կարգով և գոյութիւն սենեցող որինքների համաձայն, դատական կամ վարչական պատասխանատվութեան յենթարկելու համար:

9.

Անտառային պահախմբին իրավունք է վերապահվում, համաձայն քաղաքացիական-վարչական մարմինների համար սահմանված ընդհա-

նուր կանոնների, իր պարտականությունների կատարման ժամանակ հրապեն կրել:

Փանոբուքում.—Անտառային պահախմբին հանձնված զենքի կորստի կամ փչացման դեպքում զենքի արժեքը պահելուց դատ, հանցավորները յենթակա յեն դիպրիպինսար պատժի, իսկ ավելի լուրջ դեպքում՝ նալվ գատական պատասխանատվության:

10.

Զենքի հանձնումը մի ուրիշին, թեկուզ ժամանակավորապես, խստիվ արգելվում է և այս կետի դեմ մեղանշողները յենթակա յեն դատական պատասխանատվության:

11.

Զենքը պիտի պահվի բարեկարգ վիճակում դրա համար սահմանված կանոնների համաձայն: Փամփուշաների գործադրությունը թյուլատրվում է սույն կանոնադրության 14-րդ հոդվածով նախատեսված անհրաժեշտ դեպքերում միայն:

12.

Անտառային պահախումբն ունի Հոգովորումատի կողմից հաստատված հատուկ տարադ՝ թևվի և կրծքի համապատասխան նշաններով:

13.

Անտառային տեղական մարմիններին երկայացուցիչները ամեն տեսակի անտառային

որինախախտման դեպքում իրավունք ունին արձանագրություն կադմելու կատարվածի մասին և Հոգագործության ժողովրդական կոմիտարիատի կողմից հաստատված հատուկ հրահանգի համաձայն, մեղանշողներին դատական պատասխանատվության յենթարկելու:

14.

Անտառների պահպանման վերաբերող իրենց պարտականությունների կատարման ժամանակ անտառային պահախմբի անդամները ունին զինվորական պահախմբին վերապահված իրավունքներ:

Իրենց պարտականությունների կատարման միջոցին նրանք կարող են զենք զործադրել հետևյալ դեպքերում. —

ա) Անտառային պահախմբի վրա տեղի ունեցող զինյալ ամեն մի հարձակում վանելու կամ զինյալ դիմադրությունը ճնշելու համար.

բ) Թեկուզ վոչ զինյալ հարձակումը վանելու կամ ճնշելու համար, յերբ այդ հարձակումը նախաձեռնում են մի քանի հոգի, կամ նույնիսկ մեկ հոգի, և պահախմբի պաշտոնատար անձանց ակներև վտանգ է սպառնում:

գ) Յերբ ձեռքավորվածը վտխտի յե դիմում և անհնար է հասնել նրան ու բռնել այլ միջոցներով:

15.

Առանց բացահայտ անհրաժեշտութեան զենքը զործադրելու յեւ վիրավորելու կամ սպառնելու դեպքում, հանցավորները յենթակա յեն քրեական պատասխանատվութեան:

16.

Անտառային պահապանին, ինչպես և նրա խնամքի նախնականներին արգելվում է փայտեղենի մշակմամբ զբաղվել վոչ իրենց անմիջական զործածութեան համար:

ՀՐԱՋԱՆԳ Հ. Ս. Խ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ ՊԱՀԱՍՄԱԲԵՆ

17.

ԱՎԱԳ-ԱՆՏԱՌԻ ՊԱՀՔ

Ավագ անտառապահն անմիջապես յենթակա յե անտառապետին յեւ նրա ոգնականին, իր պահպանութեան հանձնված անտառամասում ամբողջ կատարվածի մասին ղեկուցում են նրանց և կատարում անտառային անտեսութեան վերաբերող նրանց բոլոր կարգադրութեանները:

Նա պարտավոր է. —

ա) Լավ ճանաչել յեւ պահել իրեն հանձնված անտառամասի սահմանները.

բ) Խստիվ հետեւել, զոր կրտսեր անպատակները կատարեն իրենց պարտականութեանները:

գ) Անձամբ հաշվել յեւ ստուգել կրտսեր

102

առհաստումների, անասունների չթույլ տրված տեղերում արածացնելու և խոտը հարելու դեմ:

բ) Անտառահատումը յեւ տնտեսարան ամեն մի անտառազտադործում թույլատրել անտառապետից արված սահմանված տամուկ:

գ) Խստիվ յեւ ճշգրիտ հաշվառումն կատարել անտառամասից տոմսերով պատրաստված և բաց թողնված անտառանյութի, թույլ չտալ զոր սահմանված չափից անցնի անտառազտադործումը և կարգ ու կանոնից տեղի ունեցած ամեն մի շեղման յեւ պետութեան հույսրած վնասի մասին ղեկուցանել ավագ-անտառապահին կամ անտառապետին:

դ) Արգելել զորսը չթույլատրված ժամանակամիջոցում և վորսի իրավունքը հաստատող տամսի բացահայտութեան դեպքում.

յե) Հետեւել անձամբ և պահանջել ուրիշներից, զոր անտառում կրակ անելիս հարկ յեղած զգուշավորութեան պահպանի, ճշտութեամբ և անշեղ կատարել ավագ անտառապահի կամ անտառապետի կարգադրութեաններն ու հրամանները.

զ) Անտառապետի ցուցմունքներով ղեկավարել ծառատերմերի հալաքման, սերմանման ծառատեղման ու այլ աշխատանքները:

Հոգստեմի տեղակալ՝ Ս. Շաղոյեց
Անտառային վարչութեան պետ՝ Ա. Թալեվոյս և

անտառապահները հաշվառումները անտառա-
նյութերի պատրաստման վերաբերյալ.

դ) Արգելել յեվ հետապնդել բոլոր տեսակի
ապուրինի անտառագործումները և այդ
մասին գեկուցել անտառապետին.

յե) Կատարել անտառապետի բոլոր հրա-
մաններն ու կարգադրությունները.

զ) Հետեւել, փոր կրտսեր անտառապահ-
ները զենքը պահեն բարեկարգ վիճակում
և փամփուշտները գործադրեն ըստ նպատակի.

ե) Կրտսեր անտառապահներին վարձեցնել
ղենքին, այլ յեվ հրացանի քանդելուն և սա-
րքելուն:

18.

ԿՐՏՍԵՐ ԱՆՏԱՌԱՊԱՀՆԵՐ

Կրտսեր անտառապահն անմիջականորեն
յենթակա յե իր ավագ-անտառապահին, փորին
և գեկուցում ե իր հսկողությանը հաճնված
անտառամասում կատարվածի մասին:

ա) Նա պարտավոր ե ճանաչել յուր հսկողու-
թյան յենթակա անտառամասի սահմանները և
խնամքով պահպանել այդ անտառամասը, թույլ
չտալ ու և իցե նրան տիրանալ, հետեւե-
լով, փոր սահմանադիժը չտեղափոխվի, սահ-
մանային նշանները չվռչնչացվեն, միջոցներ
ձեռք առնել հրդհների, արգելված անտառ-

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

եջ.

1. Անտառային Որենսքիրք	3.
2. Հրահանգներ անտառային տեսուչներին	28.
3. Հրահանգներ Հ. Ս. Խ. Հ. անտառային պահախմբին	51.
4. Հրահանգներ անտառային կողմնարդ- յունքների ոգտագործման մասին	71.
5. Կանոններ Հ. Ս. Խ. Հանրապետության անտառներում մեղվաբուծություն հողամասեր հատկացնելու մասին	78
6. Կանոններ փորսի, նրա ձևերի և ժամա- նակամիջոցի	83
7. Դեկրետ Հ. Ս. Խ. Հ. Կենտրոնական Գործադիր կոմիտեյի և Ժողովրդական կամիտար- ների Խորհրդի վորսորդության մասին	90

ՀՀ Ազգային գրադարան



NL0287873

20533

ԳԻՆԸ՝ 50 ԿՈՊ.

Դիմել՝ Յերեվան, ՀՈՂԺՈՂԿՈՄՍՏ